

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ԻԴԵՂԻԵՂԱԾՈՒ

ديقچكادو

Հրատարակումը համար 2, 2009 թ.

لشركة جمعية القاعة الخيرية الأرمينية العامة

ՂՕՂԱՆՁ ԱԻԵՏԻՄԻ

Հազար ութ հարիւր վախճանինն թուին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տուին.
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել -
Դժուար է ասել:

Սակայն այդ թուին Մայր Հայաստանի
Արգանդը եղաւ սրբօրէն բեղուն:
Մի մանուկ ծնուեց Լոռու Դսեղում..
Նա յետոյ պիտի դառնայ պատանի,

Եւ երիտասարդ, եւ այր իմաստուն,
Անբախտ Մարոյին լացով սպանի,
Մեր հառաչանքը հասցնի Աստծուն:
Մրմուռից դաղուած նրա բերանով

Սարոյի նանը պիտի ողբ ասի,
Մտա զօրքի Հետ Դավիթը խօսի,
Գիբորը կանչի. «Էստի Համեցէք...»:
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցէլ

Իր մոխրակալած - հրակէզ հոգին
Ե՛ւ որքան տրտում՝նոյնքան կենսագին՝
Տարիներ յետոյ նա պիտի դառնայ
Մի ժողովրդի ազնիւ կենսագիր...

ՊԱՐՈՅՐ ՍԵՆԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ
Արաքսի Տեղվեթեան

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**
Պերճ Թերզեան

**ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ**
Շահե Լուսարարեան

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԱԾԸ**
Ռիթա Եմենիճեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

**ԹԻԻ 52 Նոր Շրջան
ՅՈՒԼԻՍ 2009**

Յովհաննես Թումանեան Մեր Բնատոհմիկ Եւ Հարազատ Բանաստեղծը Վահե Հայկ	1
Համառօտ Ակնարկ Հայ Հոգեւոր Երաժշտութեան Միհրան Ղազէլեան	3
ՀԲԸՄ-ի Գահիրեի «Կռունկ» Երգչախումբին Սուրիա Այցելութեան Առթիւ Հարցազրոյց Պերճ Թերզեանի հետ Վարդան Սվաճեան	7
«Զայլ Որ Թռիչք Արժէ» Արաքսի Տեղվեթեան	9
Ողջերթի Ընդունելութիւններ ՀՀ Արտակարգ Եւ Լիազօր Դեսպան Տոցթ. Ռուբեն Կարապետեանի Եւ Իր Ազնուափայլ Տիկնոջ Արաքսի Տեղվեթեան	10
Տերսիմի Շարք Մը Գիւղերու, Սրբավայրերու Անունները Հայերէն Եւ Թրքերէն թարգմանեց Ռուբեն Մելքոնեան	11
Գոյներու Եւ Չգացումներու Վարպետ Պետրոս Ասլանեանի Հետ	13
Եգիպտահայ Նկարիչներու Գործերուն նուիրուած ցուցահանդէս Արփի Խաչերեան	14
Ժիրայր Դանիէլեան Կ'արժանանայ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան Անդրանիկ Պատուոգիրին «Տ.»	15
« Արի Տուն »	16
Հալէպի ՀԲԸՄ-ի Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանը Մրցանակակիր	17
Ժերարտ Թիֆլէքճեան ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակայինի Ատենապետ Կը Նշականակուի	17
ՀԲԸՄ-ի «Անդրանիկ» Սկաւտական Երկրորդ Ճամբարը Հայաստանի Մէջ	17
ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Մայիս Մէկեան Զերմէսը	18
Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Կազմակերպած Պասքէթ Պոլի Մրցաշարըը Սօսի Ներետեան / Յակոբեան	19
Ամառնային Եղանակի Բացման Ճաշկերոյթ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Մէջ	20
Եգիպտահայ Միջակումբային Պասքէթ Պոլի Ամառնային Մրցաշարքերու Օրէնքները	21
«Չանգեզուր» Պարախումբին Ելոյթը «Տ.»	23
Շահեկան Բանախօսութիւն Գահիրեի Ազգային Առաջնորդարանէն Ներս	23
Անդամական	24



ՅՈՎԿԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ ՄԵՐ ԲՆԱՏՈՐՄԻԿ ԵՒ ՇԱՐՈՒՄԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Յովհաննես Թումանեանի ծննդեան 140-ամեակին առթիւ մեր ընթերցողներուն կարգ մը յայտարարութիւններով կը ներկայացնենք Վահէ Յայկի յօդուածը, գրուած բանաստեղծին ծննդեան 100-ամեակին առիթով:

«Տ.»

Այս օրերուն թէ՛ մեր լուսաւոր Յայրենի աշխարհին եւ թէ՛ արտասահմանի բոլոր հայրենակարօտ գաղութներուն վերեւ կը սաւառնի եզական բանաստեղծ եւ հայ ժողովուրդի հոգւոյն երգիչ՝ Յովհաննես Թումանեանի կենդանի շունչը:

Անոր քնքոյշ հոգին այսպէս հաղորդակցութեան մէջ կը մտնէ հայուն հաւաքական հոգիին հետ եւ ներկայ հարիւրամեակի տօնակատարութեամբ անգամ մըն ալ կը տանի ապրողներու սիրտը մեր ազգային հարազատ երգին ու ներշնչումներուն եւ կը բաւայ լայն եւ գեղատեսիլ հորիզոններ մեր առջեւ:

Այսպէս որոշ եւ յստակ է անոր անմահութիւնը:

Այդ ճանապարհին վրայ մահուան ստուերներ չկան:

Մեր յոյժ սիրեցեալ Կոմիտասն ալ հոն է, նոյն ուղիին վրայ լուսափողփող:

Յովհաննես Թումանեանի թողուցած գրական ժառանգութիւնը բազմակողմանի է ու բազմերանգ: Գրչի եւ իմացական վաստակներու շքեղ պալատ մը ուրկէ ներս անցնողներ պիտի գտնեն արուեստի եւ ստեղծագործութեան հայեցի մշակումներուն գեղեցիկ յիշատակներ:

*Ինչքան ցաւ եմ տեսել ես,
Նենգ ու դաւ եմ տեսել ես,
Տարեք, ներեք ու սիրեք-
Վատը՝ լաւ եմ տեսել ես:*

Յովհաննես Թումանեան կու գայ, Լոռիի մըշտադալար լեռներէն, ուր ծնած է ան եւ ապրած հայութեան տոհմիկ եւ անարատ բարձունքներուն վրայ երկար տարիներ իր հարազատներուն շատ մօտ, բնութեան գեղեցկութիւններուն մշտապէս դրացի եւ մեր առհաւական կեանքի աւանդութիւններուն սերտօրէն հաղորդակից:

Իր գրական անհատականութիւնը եղաւ հոյակապ բարձունք մը, արուեստի եւ գրականութեան եզական հաստատութիւն մը ուր կ'ապրի ան եւ պիտի ապրի տեւականօրէն սրբազնագոյն Մեսրոպ Մաշտոցի լուսահատիկ գիրերուն հետ շաղուած եւ հայ ժողովուրդի սրտին ամենէն տաքուկ մէկ անկիւնին մէջ ամփոփուած:

Անկախ այլեւս գերեզմանին մէջ չէ, հողակոյտի ծանր քարերը մէկդի նետած՝ ելեր է ոտքի եւ խառնուեր շնչաւոր ապրողներուն, կը քալէ անոնց հետ ամեն ժամ, կը խօսի անոնց հետ, կ'երգէ, կը տաղաչափէ եւ թռչիք ու գեղեցկութիւն կու տայ ամենուն որպէս մշակոյթի յաւիտենական ուղեւոր:

Կարաններ, քաղքենի եւ գեղջկական պատկերներ, ապրող նկարագիրներ, աւանդական եւ անմահական ապրումներ, խորապէս հայկական շունչով եւ հոգիով օծուած:

Բանաստեղծին մեծ ու փոքր տարագով հիւսուած գործերուն մէջ անբաժանելի կը մնան գեղջուկ աշխատաւորի հոգին, լեզուն, ոճը առանձնայատուկ շէշտերով եւ հիանալիօրէն բնական գնացքով որոնք հեղինակին ստեղծագործութիւնը կը դարձնեն շարժապատկերի հարազատութեամբ առնուած գեղեցկութիւն:

Անոր արձակ կամ չափածոյ աշխատանքներուն մէջ կը շնչէ հայկական բնաշխարհը, կեանքի կու գայ եւ կենդանութիւն կը բաշխէ բառերուն: Մեր հայրենեաց քարքարուտ լեռները, ճիւղակուտակ գագաթները, գոռացող ջրվեժներն ու գեղեցիկ առուակները հոն են, մշակն ալ հոն է, քրտնաթոր աշխատաւորն ալ, մամիկն ալ, պապիկն ալ, հարսնուկն ալ ու անոր գլխաւորն ալ: Ապա նաեւ շնիկը, թռչնիկը,



աղուեն ու աքաղաղը եւ անոնց շուրջ քաղուած անուշիկ պատմութիւններն ալ:

Թումանեան պիտի մայ մեր անման երգիչը «Գութանին», «Հառաչանքին», «Կաթիլ մը Մեղրին», գմայլելի «Անուշին», շքեղ «Սասունցի Դաւիթին», «Թմկաբերդի Առումին» եւ բազմաթիւ այլ քերթուածներու եւ հերոսագրութեանց որոնք առանձինն հատորներու մէջ առնուած են երկար տարիներ առաջ: Անոր ամբողջական գործերու հրատարակութիւնն ալ գրական առանձին բնագաւառ մը կրնայ ամբողջացնել:

մութիւնը լեցուց սեւ էջերով, մեր վերապրող արուեստագետներուն եւ բանաստեղծներուն մէջ դրաւ դառնագոյն ցաւը: Անոնք երգեցին եւ միշտ վեր բարձրացուցին կեանքի եւ յաղթանակի առաւօտը, հայրենեաց սերը, Հայաստանի յարութիւնը:

Թումանեան եղաւ հզօր եւ բոլորանուէր կարապետներէն մին: Տեսաւ հայրենեաց ազատագրութիւնը, ապրեցաւ քանի մը տարիներ, անոր հորիզոնին տակ: Ան խօսեցաւ, կազմակերպեց, աղետէն հազիւ դուրս մնացած արեւմը-

*Հէյ ագաւ մարդ, Հէյ անհող մարդ, Միտքդ երկար, կեանքդ կարճ,
Քանի քանիսն անցան քեզ պէս, քեզնից առաջ, քո առաջ,
Ինչ էն տարել նըրանք կեանքից, թէ ինչ տանես դու քեզ Հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան էս ճամբէդ:*

Թումանեանի առակներն եւ հեքեաթները ամէնքն ալ պարզութեամբ եւ յստակութեամբ առարկայական կեանքի սովորական փորձառութիւններէն կը խօսին եւ իրենց սրտառու մտերմութեամբ կը սորվեցնեն:

Մեր մանկական գրականութեան լուսապայծառ հիմնադիրներէն մէկն է Թումանեան, որուն սիրտը ողողուած է հայրենասիրութեամբ:

Անկա կրնայ խօսեցնել հայ մանուկին սիրտը հիանալի հարազատութեամբ եւ խանդադատանքով, հայ պանդուխտի հոգին բանալ լուսանկարչի մը բնականութեամբ:

Հայ ժողովուրդի կեանքը եղաւ դառն: Թրքական ցեղասպանութեան ոճիրը, որ ցնցեց համաշխարհային խիղճը եւ մարդկութեան պատ-

տահայ մնացորդացին տուաւ այցելութիւն, 1922-ին, հիմնեց արուեստի տունը Կ. Պոլսոյ մէջ, գրագետ վերապրողներու հետ եւ վերադարձաւ Հայաստան:

Քիչ ետք 1923 թուականին անժամանակ մահուամբ, հազիւ 54 տարիներու բազմարդին կեանք մը բոլորելով, փակեց իր աչքերը առ յաւետ:

Սուգը մեծ եղաւ եւ համազգային:

Թողուց բազմաթիւ գործեր որ չէն մեռնիր եւ սահմանուած են հայ գիրերուն եւ հայ ժողովուրդի մշակոյթին հետ ապրելու տեւականօրէն եւ անվախճան:

Վահէ Հայկ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

- * Յովհաննէս Թումանեան ծնած է 1869-ին Լոռի գաւառի Դսեղ գիւղը (այժմ Թումանեան):
- * Նախակրթութիւնը կը ստանայ գիւղի վարժարանին մէջ, ապա կ'երթայ Թիֆլիսի «Ներսիսեան» դպրոցը, որուն ընթացքը չ'աւարտեր սակայն:
- * 18 տարեկանին դպրոցէն հեռանալով կը դառնայ Թիֆլիսի հայոց առաջնորդարանի քարտուղարը (1887-1892):
- * 18 տարեկանին ամուսնանալով հայր կ'ըլլայ տասնեակ մը զաւակներու:
- * Սօտ 20 տարի կ'ապրի Թիֆլիսի մէջ շէնքի մը վերնայարկը, ուր շաբաթը երկու անգամ կը հաւաքուէին գրողներ ու մտաւորականներ՝ գրական գրոյց ունենալու (Դազարոս Աղայեան, Լեւոն Շանթ, Դերենիկ Դեմիրճեան, Աւետիք Իսահակեան, Նիկոլ Աղբալեան, Աւետիս Ահարոնեան եւ ուրիշներ): Այս հաւաքոյթները կը կոչուին «Վերնատան» հաւաքոյթ, Թումանեանի բնակարանին դիրքին պատճառով:
- * Թումանեան եղած է հայ գրողներու Կողկասեան ընկերութեան նախագահ:
- * Մեռած է Մոսկուայի մէջ 1923-ին: Մարմինը փոխադրուած է Թիֆլիս եւ թաղուած Խոջեվանքի գերեզմանատունը:*
- * Հեղինակ է բազմապիսի գործերու, քնարական քերթուածներ, քառեակներ, աւանդութիւններ, առասպելներ, առակներ, դիւցազնավէպեր, վիպերգներ, հեքեաթներ, պատմուածքներ, մանկական գրութիւններ:
- * Թարգմանած է Պուլշկինի, Կեթթի, Պայրընի եւ այլ հեղինակներու գործեր:



ՎԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՎԱՅ ԵՌԳԵՒՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Հինգերորդ հարիւրամեակի արշալոյսով սկիզբ առնող Հայոց Ոսկեդարու մեծագոյն իրողութեան մէջ հայ հոգեւոր երգաստեղծութիւնը իր պոռթկալի ծագմամբ ու վերընթաց զարգացումով եղաւ ազգային մշակոյթի կարկառուն նուաճումներու այն ասպարեզը, ուր իրենց հանճարի գոհարները շաղ տուին մեր ազգային պատմութեան ամենաերեւելի դէմքերը:

Այսօր ահա աւելի քան 1600 տարիներ կը բաժնեն մեզ այն յեղաշրջող թուականէն, երբ մեր պետականօրէն քրիստոնէութեան դարձէն ընդամենը հարիւր տարիներ յետոյ, աստուածատուր հրաշքով մը մեզի շնորհուեցաւ նաեւ մեր սեփական գիրը ունենալու օրհնընծան, որով լիովին կ'ամբողջանար մեր ազգային դիմագիծը իր կարեւորագոյն ստորոգելիներով՝ բնօրրան եւ ժողովուրդ, լեզու եւ պետութիւն, կրօնք եւ գիր:

Գիրերու գիւտով, Աստուածաշունչի եւ ապա պաշտամունքային գիրքերու թարգմանութենէն յետոյ, կը գոցուէին հայոց աշխարհը մշակութային օտար ազդեցութիւններու ենթարկող առարկայական պատճառներու վերջին դուռերը եւ երկիրը կը թեւակոխէր համահայացման համընդհանուր ու վճռորոշ ժամանակաշրջանը:

Այսօր մենք ժառանգորդն ենք հայ միջնադարի մշակութային այն արժէքներուն, որոնք կ'ընդգրկեն ոչ միայն պարզապէս ժամանակի արուեստի բոլոր ճիւղերը, այլ չափանիշային արժէք ունին համընդհանուր քաղաքակրթութեան պատմութեան մէջ:

Հոգեւոր բանաստեղծութեան ու հոգեւոր երաժշտութեան տեսակները այսօր ալ մեր առաջ կը յառնեն ձեռք-ձեռքի, ինչպէս եւ եղած են անոնք ծնունդով՝ ձեռք-ձեռքի: Պատարագ ու գանձարան, մեղեդի ու շարական եւ հոգեւոր երգեցողութեան դեռ շատ ուրիշ տեսակներ կը լեցնեն մեր օրացոյցին ամէն մէկ օրը՝ իրենց չրզնող կանչով կրկին ու կրկին հրաւիրելու մեզ վսեմագոյնին հետ մշտանորոգ յարաբերութեան:

Հայ եկեղեցւոյ արարողակարգին մէջ երգին կը տրուի առանձնայատուկ տեղ, որով այսօր մեզի կը ներկայանայ հայ հոգեւոր երգը իր աւելի քան մէկ ու կէս հազարամեայ պատմութեան զարգացման առանձնայատուկ փուլերով:

Տերունի եւ այլ հանդիսաւոր աւուրց (օրերու), հինգ տաղաւարաց եւ լուր աւուրց (սովորական օրերու), Մեծ պահքի Շաբաթի ժամասացութիւններն ու Կիրակիի պատարագները, ամենօրեայ ժամերգութիւնները, ինչպէս նաեւ միւս բոլոր ծիսական-պաշտամունքային արարողութիւնները լի են հոգեւոր երգասացութիւններու հոգեզմայլ

մեղեդիներով:

Հոգեւոր երգերը բանաստեղծական արուեստի դրսեւորման իրենց ձեւերով ու աստուածաշնչային կամ ազգային ու պատմական իրենց բովանդակութեամբ տարբեր ժամանակաշրջաններու մէջ այլազան երանգներ ունեցած են: Հոգեւոր (քրիստոնէական) երգերու ծագումը կը հաշուուի Ե դարէն, երգեր, որոնք աստիճանաբար զարգանալով ու տարածուելով մտան ընդհանուր ժամակարգութեան մէջ: Նշելի է, որ հոգեւոր երգաստեղծութեան մէջ բանաստեղծական ու երաժշտական արուեստի նմոյշներու գերակշիռ մասը ներկայացուած են շարականի սեռով, սեռ՝ որով գերազանցապէս կ'արտայայտուի Ե-ԺԵ դարերու մեր երաժշտաբանաստեղծական արուեստը:

ՇԱՐԱԿԱՆ

Շարականներու եւութիւնը «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» է, այսինքն աղօթք, գոհաբանութիւն, պաշտամունք՝ երգի ձեւով, վաւերացած մեր եկեղեցւոյ կողմէ, եւ համակարգուած ըստ մեր եկեղեցական օրացոյցի:

Շարական ըսելով կը հասկնանք.

1. Եկեղեցական երգ.
2. Եկեղեցական երգերու շարք՝ կանոն:
3. Եկեղեցական երգերու ժողովածոյ գիրք, այսինքն «Շարակնոց», «Ձայնաքաղ շարական», որը նախապէս կոչուած է նաեւ «Երգարան», «Գանձարան», «Բուրաստան հոգելից» եւայլն:

Շարակնոցը կը պարունակէ շարականներու թե՛ բնագիրը, եւ թե՛ խազագրութեամբ արտայայտուած երաժշտութիւնը: Խազագրութիւնը նշանագրական դրութիւն մըն է, որով համապատասխան նշաններ կը դրուին բնագրային համապատասխան վանկին վրայ՝ ուղղութիւն տալով կատարողին: Ասիկա երաժշտութիւնը թուղթին յանձնելու, բանաւորէն գրաւորին անցնելու նախական քայլ մըն էր, որ սկիզբ առաւ հոգեւոր միջավայրին մէջ: Խազերը սկզբնական շրջանին առոգանութեան ու շարահիւսական նշաններ էին, որոնք աստիճանաբար զարգանալով ու կատարելագործուելով իրենց մէջ ներառին կշռութային (ռիթմիկ) եւ ելեւէջային (ինթոնացիոն) իմաստ: Սակայն խազերու համակարգի անկատարութիւնը, անոր աստիճանական բարդացումը, ընթերցման կարգի ոչ միանշանակութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական ու այլազան ենթակայական ու առարկայական պատճառներու հետեւանքը եղաւ այն, որ հարիւրամեակներու ընթացքին անոր ընթերցումն ու օգտագործումը հետըզհետէ անմատչելի դարձաւ շատերու համար եւ ի



վերջոյ բոլորովին կորսուեցաւ: ԺԴ դարէն ետք շարականներու եղանակները կրկին սկսան փոխանցուիլ միայն յիշողութեամբ՝ ենթարկուելով բանաւոր փոխանցուող երաժշտական նիւթի անխուսափելի ու շարունակական փոփոխութիւններուն, մինչդեռ անոնց արտագրութիւնները պահպանեցին խազերու նշաններու փոխանցումը սերունդէ-սերունդ անփոփոխ: Հակառակ խազագրութեան վերծանման վերջին մէկ-մէկուկէս հարիւրամեակի անհատական պրպտումներուն, անոնք այսօր ալ կը մնան անընթեռնելի կամ առնուազն կը մնան զրկուած համընդհանուր ճանաչման ու հաւանութեան արժանացած առաջարկուող մեթոտ-բանալիէ մը:

Այսօր մեր գործածած հոգեւոր երաժշտութեան հիմնական գրաւոր աղբիւրը ԺԹ դարու առաջին կիսուն ստեղծուած Հայ Նոր Խազագրութեամբ կամ Լիմոնճեանի խազեր կոչուող համակարգով նոյն դարավերջի երկրորդ կիսուն գրի առնուած եւ մեզի հասած շարակնոցներն են: Անոնք գրի առնուեցան Եղիա Տնտեսեանի, Նիկողայոս Թաշճեանի եւ Հայր Ղեւոնդ Տայեանի շնորհիւ՝ վերջակէտ դնելով ակամայաբար բանաւոր կերպով փոխանցուող երաժշտական մշակութային ժառանգութեան այս կարգավիճակին: «Հայ Նոր Խազագրութիւն» կամ «Լիմոնճեան Խազեր» կոչուող եւ այսօր ալ գոյատեւող այս համակարգը իր արտաքին տեսքով կը ներկայացնէ խազերու նոյն հին նմոյշներու կերպարանքը, սակայն համակարգային նոր հասկացողութեամբ եւ տեսականօրէն յստակ շարադրուած ու բացատրուած:

ԺԲ դարուն Ներսէ Շնորհալիս Է, որ առաջին անգամ կը գործածէ հոգեւոր երգի բնագաւառին մէջ ամենակարեւոր ու մեծաթիւ մասը կազմող տեսակի՝ «շարական» անունը: Այս երգերը՝ շարականները գլխաւորապէս կապուած են տօնացոյցի եւ օրացոյցի մէջ եղած Տէրունի եւ Սուրբերու տօներուն հետ, որոնք իրենց սարօքն՝ այսինքն «կանոնապատկան շարքով ու հերթով» կ'երգուին համապատասխան օրերուն: Շարականներու սեռը քրիստոնէական միւս եկեղեցիներուն մէջ յայտնի է որպէս հոգեւոր օրհներգ՝ հիմն:

Վաղ Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ պաշտամունքային երգեր տակաւին չիկային, ուստի կ'ընթերցուէին միայն սաղմոսները: Երաժշտութեան տեսքով գեղարուեստի ներթափանցումը եկեղեցւոյ արարողութեան մէջ աստիճանաբար անհրաժեշտութիւն մը եղաւ այս պաշտամունքը աւելի դիւրամատչելի դարձնելու եւ երաժշտապէս ծիսականացնելու ճամբուն վրայ: Սաղմոսները սկսան երգուիլ ութ ձայնեղանակով: Դրական նորամուծութիւններու արդիւնք էր նաեւ ամենաառաջին հոգեւոր երգի տեսակի ծնունդը, որը իբրեւ գեղարուեստական ստեղծագործութիւն, սկզբնական շրջանին անշուշտ պակաս ինքնուրոյն

էր: Կցուող կոչուող առաջին հոգեւոր երգերը (յունարէն՝ տրոպարիոն, ասորերէն՝ Էնէանա) կըրցուած կ'ըլլային սաղմոսներուն եւ կը շարունակէին անոնց միտքը: Հոգեւոր առաջին երգերու Կցուող անունն ալ արդէն սաղմոսներուն կցուած ըլլալու հանգամանքէն կու գայ: Բնական եւ ազատ միտքի զարգացումը առիթ եղաւ նոր հոգեւոր երգերու ստեղծման՝ նուիրուած այս կամ այն տօնին կամ սուրբին: Աստիճանաբար զարգացաւ նաեւ այս ոլորտը: Այս նոր երգերը արդէն սաղմոսներէն անկախ էին եւ ինքնուրոյն: Սկսաւ ընդարձակիլ հոգեւոր երգի տարողութիւնը թէ՛ բովանդակութեան, եւ թէ՛ գեղարուեստական հնարքներու եւ միջոցներու տեսակետէն: Կցուող երգերէն մինչեւ վերջնականապէս ձեւակերպուած շարակնոցը շուրջ հազարամեայ զարգացման ճանապարհ կ'ընդգրկէ: Շարականի զարգացումը, որպէս երգի տեսակ, կ'ընթանայ երկու ուղղութեամբ. - 1. երաժշտական, 2. գրական-բովանդակային: Կը լայնանան շարականնրու ընդգրկման շրջանակները, ի յայտ կուգան նոր անուններ, նոր դիպաշարեր, ազգային եւ օտար սուրբեր, մինչեւ անգամ աշխարհիկ գործիչներ: Աշխարհիկ դեմքեր կային նաեւ հեղինակներու շարքին (Աշոտ Պատրիկ Բագրատունի, Համամ Արեւելցի), նոյնիսկ կանայք (Խոսրովիդուխտ Գողթնացի, Սահակադուխտ Սիւնեցի):

Շարականները անցած են զարգացման հազարամեայ ճամբայ (Ե-ԺԵ դարեր), մինչդեռ անոնց գերակշիռ մասին ժամանակային եւ հեղինակային ստոյգ պատկանելիութիւնը այսօր ալ կը մնան անորոշ եւ կամ բոլորովին անյայտ: Ընդհանրապէս հեղինակ երեւոյթի արժեւորումը ուշ ժամանակներու մտածողութեան պահանջ է: Մինչդեռ միջին դարերուն երկրորդական եղած է ստեղծագործութեան հեղինակին ինքնութիւնը: Այդպէս է նաեւ շարականներու պարագան: Այստեղ կարելորը այն անձնաւորութիւնն է՝ սուրբը, որուն նուիրուած է բանաստեղծութիւնը: Բացառիկ դէպքերէն է Ներսէ Շնորհալիի Նորահրաշ շարականի պարագան, որը գրուած ըլլալով բանաստեղծական ծայրակապային հնարանքով (ակրոստիկոս), իր կազմութեամբ մեր առաջ կը պարզէ իր իսկ հեղինակը: Շարականին տասը տուններէն իրաւքանչիւրը կը սկսի գիրով մը, որոնք քով-քովի բերելով կը կարդանք Ն-Ե-Բ-Ս-Է-Ս-Ի-Ե-Բ-Գ «ստորագրութիւնը»: Իսկ ընդհանրապէս այն աղբիւրները, որոնք մասնակիօրէն կը մատնանշեն հեղինակը, հետեւաբար եւ ստեղծման ժամանակը, կը մնան «Յայսմաւուրքը», Գրիգոր Տաթեւացի, Սարգիս Եւ Ստեփանոս Երեցները, Կիրակոս Գանձակեցի, «Շարակնոցի» նախաբանը եւայլն եւ կը վերաբերին աւելի քան 2000 շարական ընդգրկող Շարակնոցին մէկ մասին միայն: Բանասերներու եւ երաժշտագետ-



ներու ուսումնասիրութիւնները այս առընչութեամբ առաւելապէս կը հանդիսանան նշեալ աղբիւրներու հեղինակային տեղեկութիւններու հաւանականութեան կամ անհաւանականութեան ճշգրտումներ ու հիմնաւորումներ:

Յստակ է նաեւ, որ շարականներու բացարձակ մեծամասնութեան մէջ իւրաքանչիւր շարականի խօսքն ու երաժշտութիւնը յօրինուած է միեւնոյն հեղինակին կողմէ: Մանաւանդ որ ինքը՝ շարականը, որպէս գրական- երաժշտական ստեղծագործութիւն, նախատեսուած է երգելու եւ ոչ ասմունքի համար:

Մինչեւ Շնորհալին գրուած շարականներուն մեծ մասին բանաստեղծական կառուցուածքը ազատ չափով է կամ արձակ բանաստեղծութեամբ՝ բացառելով Մաշտոցի քանի մը շարականները եւ Կոմիտաս Կաթողիկոսի «Անծինք Նուիրեալքը»: Ուրեմն ինչու համար այս «կաշկանդումը», հակառակ անոր, որ մեր շարականագիրները եղած են բանաստեղծներ, տիրապետած են օտար լեզուներու, ծանօթ՝ դրացի ժողովուրդներուն բանաստեղծութեան եւ ընդհանրապէս անտիկ (հնագոյն) բանաստեղծութեան:

360 թուականին Լաւոտիկէի Եկեղեցական Ժողովը կը քննէ այն հարցը, թէ արդեօք հոգեւոր երգերը պէտք է գրուին արձակ, թէ՛ չափածոյ: Եւ կ'որոշեն, թէ չափածոն հեթանոսական արուեստ է եւ Արարչին հետ ոտանաւորով խօսքը անբնական է եւ հակաքրիստոնէական: Ատով պէտք է բացատրել, որ դարեր շարունակ մերժուած է տաղաչափական արուեստով հոգեւոր երգեր յօրինելը: Սակայն է դարէն սկսեալ, շրջանցելով Լաւոտիկէի ժողովի որոշումները, շարականները կը սկսին գրուիլ նաեւ հետեւելով տաղաչափական արուեստի կանոններուն:

Մեր հոգեւոր երգին մէջ իսկական տաղաչափական արուեստ ներմուծողը եղաւ Ներսէս Շնորհալին՝ այդ բնագաւառին մէջ մնալով անգերազանցելի:

Կրօնական բանաստեղծութիւնը կամ հոգեւոր երգը, ինչպէս բոլոր ժողովուրդներու համար, այնպէս ալ մեզի համար, կը զարգանայ ազգային մշակոյթին եւ պատմութեան հետ: Շարականներուն մէջ արտացոլուած են հայ մարդու կրօնական ըմբռումները, հաւատքը, կատարեալ կենքի երազանքն ու ձգտումը միջնադարեան մարդու երեւակայութեամբ ու «ազատութեամբ» եւ «սահմանափակուած» Եկեղեցւոյ Հայրերու կողմէ կանոնականացուած նմոյշներու օրինակներով եւ հնարաւորինս զերծ յանցաւոր հպարտութիւն համարուող անհատական նախաձեռնութիւններէ:

Ը դարէն սկսեալ շարականները, նկատի ունենալով նիւթին դաւանական անաղարտութիւնը եւ

գրական ու երաժշտական կողմի կրօնական արուեստին համապատասխանութիւնը, աստիճանաբար սկսան գտուիլ եւ խմբաւորուիլ կանոններու մէջ: Այս հոգեւոր երգերը հետեւելով ութ կանոն սաղմոսներուն կազմեցին իրենց համապատասխան շարքը, որմէ կու գայ նաեւ շարական բառը տարատեսակներու կանոնական իր հետեւեալ հերթականութեամբ.

1. Օրհնութիւն
2. Հարց
3. Մեծացուցէ
4. Տէր յերկնից
5. Մանկունք
6. Ողորմեա
7. Ճաշու
8. Համբարձի

Կանոնը շարականներու խումբ է՝ նուիրուած որեւէ տօնի: Կանոնի բաղադրիչները կը բնութագրուին համապատասխան բանալի բառով, որը կը կրկնուի իւրաքանչիւր տունի կրկներգին մէջ: Ատոնք այն բառերն են, որմէ շարականին տեսակը առած է իր անունը. - Մեծացուցէ, Ողորմեա եւ այլն: Այս բնորոշումները կը դրուին նաեւ համապատասխան շարականէն առաջ, երաժշտական թելադրանքին հետ: Երաժշտական թելադրանքը ութ ձայնեղանակներէն մէկուն նշումն է ձայնեղանակներու տարատեսակները բնորոշող հետեւեալ շարքէն - ԱՁ, ԱԿ, ԲՁ, ԲԿ, ԳՁ, ԳԿ, ԴՁ, ԴԿ:

Այս ութ ձայներու դրութիւնը միջնադարեան ընդհանուր քրիստոնէական աշխարհին բնորոշ երելոյթ է, որն իր տեղական առաձնայատկութիւնը ունի՝ կապուած ազգային առանձնայատկութիւններու հետ: Ատով կը զանազանուին օրինակ հայկական ութ ձայնը յունականէն, ասորականէն, լատինականէն, սլաւոնականէն եւ այլն: Այսպիսով, կանոնականացուած է ոչ միայն գրական կողմը, այլ նաեւ երաժշտականը՝ հիմնուած 8 ձայն կոչուող եղանակային տիպարներու վրայ:

Շարականներու գործածութիւնը ժամերգութեան մէջ ամբողջ տարուան ընթացքին կը կատարուի ըստ «Մաշտոց» ծիսագրքին, որը 870 թուականին Սեւանայ վանքի վարդապետ եւ ապա հայրապետ՝ Մաշտոց Կաթողիկոսը կազմած է:

Շարականներու այս տեսակները, բացի «Մեծացուցէն», իրենց նիւթը Հին Կտակարանէն առած են: Իրենց անունները նոյնպէս կու գան Սուրբ Գիրքէն՝ դառնալով շարականներու բնաբան կամ վերնագիր: Օրինակ, ութ կանոն շարականներուն մէջ ըստ օրուայ ձայնեղանակի եւ տօնի, գլխաւոր դերը «Օրհնութիւն» կոչուած շարականինն է, որուն պէտք է յաջորդէ մնացեալ՝



«շարքը կամ սարքը»՝ համապատասխանելով թե՛ ոգիով, թե՛ ձայնեղանակով:

Ամեն «Օրհնութիւն» ունի իր ուրոյն բովանդակութիւնը: Այս շարականը «Օրհնութիւն» կը կոչուի որպէս բնաբան Յին Կտակարանի օրհնութիւնները գործածած ըլլալուն պատճառով, որ կը սկսի Մովսէս մարգարէի «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» բառերով:

«Յարց», այսինքն Յայրերու կոչուող շարականի տեսակը բնաբան ունի Բաբելոնի երից մանկանց օրհնութիւնը.- «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց»:

«Ողորմեաներու» վերնագիրը Դաւթի Ծ. (50-րդ) սաղմոսէն է, որը կը սկսի «Ողորմեա ինձ Աստուած հարցն մերոց» խօսքերով:

«Տէր յերկնիցը» վերցուած է Դաւթի ՃԽԲ. (142-րդ) սաղմոսէն.- «Օրհնեցէք զՏէր յերկնից, օրհնեցէք զՆա ի բարձանց»:

«Յամբարձիւն» Դաւթի ՃԻ. (120-րդ) սաղմոսէն է.- «Յամբարձի գաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»:

«Մանկունքը» ՃԺԲ. (112-րդ) սաղմոսէն է.- «Օրհնեցէք մանկունք զՏէր եւ օրհնեցէք զանուն Տեառն»:

«Ճաշուն» ՃԺԴ. (114-րդ) սաղմոսէն է.- «Սիրեցի, զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց»:

Իսկ «Մեծացուցէն» միակն է, որ առնուած է Նոր Կտակարանէն: Ան Մարիամ Աստուածածնի օրհներգութիւնն է՝ (Ղուկասի Աւետարան, գլուխ Ա. թիւ 46-47) «Մեծացուցէ անձն իմ զՏէր, եւ ցնծացէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով», որով եւ կը սկսի կանոնի մեծացուցէ անունը կրող իւրաքանչիւր շարական:

Վերոյիշեալ այս ութ նախադասութիւնները կը կոչուին «սկսուածքներ», որոնցմէ անպայմանօրէն մէկով կը սկսի ամեն մէկ շարական՝ համապատասխանաբար իր տեսակին: Շարականներուն մեծ մասը երեք տունով են եւ կամ հաւասար երեքի բաժնուող տուներով եւ որոնք կ'երգուին Նոյն եղանակով: Այս եռամաս բաղկացութիւնը համապատասխանեցումն է Սուրբ Երրորդութեան Խորհուրդին՝ Յայր, Որդի եւ Սուրբ Յոգի, իսկ ամեն տուն միեւնոյն եղանակով կ'երգուի, քանի որ այս երեքը կը կազմեն մէկ Աստուածութիւն եւ մէկ բնութիւն:

Ըստ ծագման շարական բառը տարբեր բացատրութիւններ ունի: Ան երբեմն բացատրուած է որպէս շար եւ ակն բառերու բարդոյթ, այսինքն՝ շարք ազնիւ քարերու, իբրեւ շար ականց, գոհարներու շարք՝ այլաբանելով երգի վայելչութիւնը:

Ներսէս Լամբրոնացին Ներսէս Շնորհալիին նուիրուած «Գովեստ ներբողական»-ին մէջ, ակնարկելով Շնորհալիի երաժշտական, բանաստեղ-

ծական եւ կրօնական վաստակին, կը գրէ.

«Շարականաց կարգ աճեցներ,
Տաղերգութիւնս ի շահ առներ,
Քաղցր ձայնուք անջրպետեր,
Որ երաժիշտ Սուրբ Յոգւոյն էր»:
Առաքել Սիւնեցիս կը գրէ.

«Ռեւոլիւցիոնալ պատրաստեցին
Եւ շարական անուանեցին»:

Մէջբերեցք եւ այլոց կարծիքները հայոց շարականներու մասին՝

Ըստ Կուլիէլմոս Վուլրուայի՝ «Չիկայ աւելի պերճախօս ու սրտառուչ բան, քան հայկական աղօթքները եւ աւելի մեծափառ բան, քան հայոց ժամերգութիւնը»: Իսկ ժամերգութեան ոգին արդէն շարականն է: Մէկ ուրիշ տեղ կը կարդանք. «Չի բանաստեղծութիւն հայկական հոյակապ են ի բառսն, ազնուական յիմաստս, եւ դժուարին ի կազմութեան, այլ եւ զի այս քերթուածք եւ գործք արանց երեւելեաց ի գիտութեան, Աստուածպաշտութեան, ու ի բնատուր ձիրս բանաստեղծութեան»:

Ըստ Գ. Աւետիքեանի՝ շարականները կան որպէս «պսակ գեղապատշաճ ի զարդ Աստուածային պաշտօնեղութեան»:

Ըստ Ա. Մադոյեանի՝ «Եթէ կայ մի գաղափար, որ կարող է համարուել շարականների առանցքը, ապա դա յոյսն է անկասկած: Այս գեղեցիկ յանգերգը, ինչպէս եւ լուսերգութիւնը, որ արդէն հայոց հին հաւատքի ոգին էր, սերը մերձաւորի եւ ընդհանրապէս յարգալից կամ գոնէ հանդուրժողական վերաբերմունքը ուրիշների նկատմամբ շարունակեցին տելել Նոր կեցութեամբ՝ հարիւրաւոր առանձին միաւորներից բաղկացած բազմաբովանդակական այս ժողովածուն դարձնելով միասնական, ներդաշն ամբողջութիւն, մի համաձայնագ՝ շարականոց»:

Ահա այս լոյսին տակ բոլորովին հասկնալի կը դառնայ, թէ ինչու շարակնոցը հայ մատենագրութեան ամենէն շատ ընթրիսկուած գիրքերէն մէկն է եւ տրամաբանական է, որ հայոց հոգեւոր բանաստեղծութեան մէջ շարականները անշուշտ, ի սկզբանէ առաջնային դեր ստանձնած են ոչ միայն որպէս ծիսակարգի հիմնական, կարեւորագոյն բաղադրիչ, այլ նաեւ որպէս արդիւնք իրենց գեղարուեստական բարձր արժանիքներուն, որով եւ կը դառնան հայ հոգեւոր երաժշտութեան աղամանդակուռ փառապսակը:

Միհրան Ղազելեան



ՀԲԸՄ-Ի ԳԱՀԻՐԵԻ «ԿՈՒՆԿ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ՍՈՒՐԻԱ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ ՀԵՏ

Վերջերս Պեյրուքեն բարեկամ մը խմբագրութեանս դրկեց անլի քան քսան տարի առաջ «Չարթօնք» օրաթերթին մէջ (Շաբաթ, 18 Փետրուար 1989) լոյս տեսած այս հարցազրոյցը:

Նկատի ունենալով որ սոյն հարցազրոյցը ցարդ լոյս չէ տեսած Եգիպտոսի մէջ եւ անոր պարունակած կարգ մը տեղեկութիւնները, հակառակ տարիներու թաւալումին, տակաւին կը պահեն իրենց շահեկանութիւնը, յարմար դատեցինք զայն ներկայացնել մեր ընթերցողներուն:

Նշենք նաեւ թէ, 20 տարի անց, Գահիրէի ՀԲԸՄ-ի երգչախումբը, այս անգամ մասնակաւ «Օրածան» երգչախումբը, որ արդէն հինգ տարի է կը գործէ խմբավարութեամբ մօ. Միհրան Ղազէլեանի, կը մեկնի Սուրիա, ու ելոյթ պիտի ունենայ Հալէպի մէջ, կազմակերպութեամբ Հալէպի ՀԲԸՄ-ՅԵԸ-ին:

Օգոստոս 25-30 իրենց հնգօրեայ այցելութեան ընթացքին, խումբին անդամները պիտի ծանօթանայ Հալէպի ՀԲԸՄ-ՅԵԸ-ի իրենց հասակակիցներուն եւ այցելեն ՀԲԸՄ-ի Հալէպի Կեդրոնը, Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանը եւ քաղաքի տեսարժան վայրերը:

«Տ.»

Ուրբաթ 20 Յունուար 1989-ին Հալէպ կը ժամաւեր Գահիրէի ՀԲԸՄ-ի «Կոունկ» երգչախումբը, զոր դիմաւորելու համար պանդոկ փութացած էին ՀԲԸՄ-ի եւ ՅԵԸ-ի վարչական պատասխանատուները եւ մեծ թիւով երիտասարդներ: Նոյն օրը, երեկոյեան, ակումբիս մէջ կը կազմակերպուէր ընթրիք մը, ուր հիւրերն ու հիւրընկալները փոխադարձաբար կը ծանօթանային իրարու: Յաջորդ օրերուն ՅԵԸ-ական երիտասարդները միշտ շրջապատեցին երգչախումբի անդամ-անդամուհիները եւ շուտով դարձան սերտ ընկերներ: Չէ՞ որ տարբեր հորիզոններու տակ ապրելով հանդերձ, անոնք կը ծառայեն նոյն իտեալներուն եւ նոյն նպատակին:

Առիթէն օգտուելով հարցազրոյց մը կ'ուզեմ ունենալ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ՝ Պր. Պերճ Թերզեանի հետ, որ սիրայօժար կը հաճի պատասխանել մեր հարցումներուն:

ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչ պատկեր կը ներկայացնէ այսօր Եգիպտոսի գաղութը:

ՊԱՏՄԱՆԱՆ.- Եգիպտոսի գաղութը արտասահմանի ամենահին եւ կազմակերպուած գաղութներէն կը նկատուի: Հայութիւնը պետութեան կողմէ կը ճանչցուի իբրեւ կրօնական համայնք: Գոյութիւն ունի հայ առաքելական համայնքին յատուկ կազմական կանոնագիր՝ վաւերացուած պետութեան կողմէ: Պարագան նոյնն է հայ կաթողիկէ համայնքին համար եւս: Հայ աւետարանական համայնքը չէ ունեցած այս ճանաչումը: Ազգային Առաջնորդարանը կը ղեկավարուի պետութեան կողմէ վաւերացուած վերոյիշեալ կազմական կանոնագրով, ըստ որուն գոյութիւն ունին Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ համար առանձին Թեմական Ժողովներ, որոնցմէ իւրաքանչիւրը կը բաղկանայ 24 հոգիներէ: Այս երկու ժողովներու միացումով կը գոյանայ Եգիպտոսի Թեմական Համագումար-Ժողովը: Թեմական Ժողովէն կը բխի եօթը հոգիներէ քաղաքական ժողով մը, որ իւրաքանչիւր քաղաքի Առաջնորդարանին գործադիր մարմինն է: Այս մարմինը իր կարգին կը նշանակէ Առաջնորդարանի ծիրէն ներս գործող զանազան հոգաբարձութիւններու անդամները:

Այս ձեւով Եգիպտոսի թեմը կը ներկայանայ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ համար երկու անշատ Առաջնորդարաններով, որոնք Առաջնորդ Սրբազանին անձով կը վերածուին մէկ թեմի: Եգիպտոսի Թեմի Առաջնորդը կ'ընտրուի Թեմական Համագումար-Ժողովին կողմէ: Առաջնորդին ընտրութիւնը Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ հաստատուելէ յետոյ, Առաջնորդը իր պաշտօնին մէջ կը վաւերացուի պետական յատուկ հրամանագրով:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ազգային իշխանութիւնները 1975-էն սկսեալ կազմուած են համագործակցական հիման վրայ, անխտիր մասնակցութեամբ բոլոր հատուածներուն:

Եգիպտոսի մէջ գոյութիւն ունին երեք վարժարաններ, որոնք ենթակայ են Ազգային Առաջնորդարանին: Գահիրէի մէջ կը գործէ Գալուստեան Ազգային վարժարանը, որ հիմնուած է 1854-ին, այժմ ունի շուրջ 80 աշակերտ՝ մասնաւորապէս միւլտիպլիկատի ունինք Նուպարեան Ազգային վարժարանը, հիմնուած 1924-ին, ունի 125 աշակերտ, նոյնպէս մասնաւորապէս միւլտիպլիկատի պաքալորեա: Իսկ Աղեքսանդրիոյ մէջ կը գործէ Պօղոսեան Ազգային վարժարանը, շուրջ 90 աշակերտներով, հիմնուած 1862-ին:

3.- Որքա՞ն կը գնահատուի Եգիպտոսի հայութիւնը:



թեան թիւը այսօր:

Պ.- Եգիպտահայութիւնն ալ, ինչպէս շատ մը այլ հայ գաղութներու պարագային, պաշտօնական մարդահամար չունի. ամենալաւատես գնահատումներով կը հաշուէ 8-10 հազար, որուն քառորդը՝ Աղէքսանդրիա, մնացեալը Գահիրէ:

3.- Եգիպտահայ մամուլին, մշակութային եւ մարզական, բարեսիրական եւ հասարակական կազմակերպութեանց մասին հաճեցէք որոշ տեղեկութիւններ տալ:

Պ.- Յարո՛ղ, Եգիպտոսի մէջ լոյս կը տեսնեն «Արեւ» (ՌԱԿ), «Յուսաբեր» (ՅՅԴ) օրաթերթերը եւ «Ձահակիր» (ՍԴՅԿ) շաբաթաթերթը: Գահիրէի եւ Աղէքսանդրիոյ մէջ կը գործեն ՅՄԸՄ-ՆՈՒՊԱՐ-ը (համագործակցութիւն), նաեւ ՅՄԸՄ-Արարատը եւ ՅՄԸՄ Կամքը, որոնք քոյր մասնաճիւղերն են արտասահմանի ՅՄԸՄ-ին: Նիր Իսթ եւ Սրբուհի Թերեզա ակումբները, երկուքն ալ Գահիրէ: Իսկ մշակութային միութիւններն են ՅԲԸՄ-ը, Գահիրէ եւ Աղէքսանդրիա, Յայ Գեղարուեստասիրաց Միութիւնը, Կոկանեան սրահը, Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւնը, որոնք բոլորն ալ ունին իրենց հաւաքավայրերը: Ինչպէս նաեւ Յայ Ազգային Յիմնադրամը, որ «Արեւ» օրաթերթին հրատարակիչ միութիւնն է:

Ասոնցմէ անշատ կը գործեն Յայկական Ընթերցասրահը, «Ձահակիր»-ի շրջանակէն, նաեւ Յուսաբեր Մշակութային Միութիւնը Գահիրէ եւ Յառաջդիմաւոր Աղէքսանդրիա, կը պատկանին «Յուսաբեր»-ի շրջանակին: Կը գործէ նաեւ Յայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերակցութիւնը, որուն մէջ ներկայացուած են բոլոր կողմերը:

Ասոր հիմնական նպատակն է հայ մշակոյթն ու արուեստը ծանօթացնել օտարներու: Գործի վրայ են շարք մը բարեսիրական կազմակերպութիւններ՝ ՅԲԸ Միութիւնը, Յայ Կարիքի Խաչը եւ Այծեմիկ Տիկնանց Միութիւնը, որ կը պահէ Կարապետ Աղա Աբիկեան հանգստեան տունը: Վերջապէս, գաղութը ունի մշակութային, մարզական եւ բարեսիրական եռուն գործունէութիւն:

3.- Եգիպտոսը եղած է ՅԲԸ Միութեան ծննդավայրը, հակիրճ կերպով խօսեցէք անոր մասին:

Պ.- Ծանօթ է որ ՅԲԸՄ-ը հիմնուած է Գահիրէ 1906-ին: 1921-ին կեդրոնը փոխադրուած է արտասահման, իբրեւ զուիցերիական ընկերակցութիւն: Այդ թուականին Եգիպտոսի մէջ գոյութիւն չունէր միութիւններու գործունէութիւնը կանոնաւորող եւ հակակշռող յատուկ օրէնսդրութիւն: Միութեան հիմնադիր Պօղոս Նուպար եւ իր գործակիցները, փափաքելով միութեան գործառնութիւնները հաստատ հիմերու վրայ դնել եւ գայն քաղաքական վերիվայրումներու հետեւանքներէն հեռու պահելու նախագուշուութեամբ, հեռատեսութիւնը ունեցած են Միութիւնը արձանագրելու որպէս զուիցերիական բարե-

սիրական ընկերութիւն՝ իրաւական կեդրոն ունենալով Լոզանը:

Եգիպտոսի մէջ գոյութիւն ունէր Շրջանակային Յանձնաժողով մը, որ մինչեւ 1940-ական թուականներու վերջերը պատասխանատուն էր Եգիպտոսի, Պաղեստինի, Սուրիոյ եւ Լիբանանի գործունէութեանց: Այս դերը յետագային, քաղաքական պայմաններու բերումով, սահմանափակուեցաւ, ընդգրկելով միայն Եգիպտոսի շրջանը: Այժմ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը կապի օղակն է Բարեգործականի Կեդրոնին եւ Եգիպտոսի մէջ ՅԲԸՄ-ի հովանաւորութիւնը վայելող կազմակերպութեանց միջեւ:


3.- Ե՞րբ կազմուած է «Կռունկ» երգչախումբը. հաճեցէք որոշ ծանօթութիւններ տալ անոր խմբավար Յայկ Սարգիսեանի մասին:

Պ.- ՅԲԸ Միութեան հովանաւորութեամբ «Կռունկ»-ը կազմուած է 1983-ին: Անոր խմբավարը Յայկ Սարգիսեան, իր նախնական կրթութիւնը ստացած է Գահիրէի Գալուստեան Ազգային վարժարանը, ապա յաճախած է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ուրկէ շրջանաւարտ ըլլալով մեկնած է Յայաստան, յաճախելով երաժշտական ուսումնարան եւ ապա՝ Կոմիտասի անուան երաժշտանոցը, որուն հնգամեայ դասընթացը փայլուն կերպով աւարտելէ ետք, վերադարձած է Եգիպտոս: Խմբավարութեան կողքին ան կը պաշտօնավարէ որպէս երաժշտութեան ուսուցիչ ազգային վարժարաններու մէջ թէ՛ Գահիրէ եւ թէ՛ Աղէքսանդրիա: Այժմ ան խմբավարն է նաեւ Աղէքսանդրիոյ ՅԲԸՄ-ի «Գուսան» երգչախումբին: Շնորհիւ իր ջանքերուն եւ հմայքին եգիպտահայ երիտասարդութիւնը ունեցաւ հայ տոհմիկ երաժշտութեան հանդէպ ե՛ւ սեր ե՛ւ ճաշակ ե՛ւ ըմբռնում:

3.- Դամասկոս եւ Յալէպ ձեր տուած այցելութիւնները ի՞նչ տպաւորութիւն ձգեցին ձեր եւ երգչախումբի անդամներուն վրայ:

Պ.- «Կռունկ» երգչախումբի անդամներուն համար այս այցելութիւնը իբրեւ երիտասարդներ, նոր ու բացառիկ փորձառութիւն մըն էր, նկատի ունենալով որ անոնք ելոյթ պիտի ունենային իրենց համար բոլորովին նոր եւ անծանօթ հասարակութեան մը առջեւ: Ուրախ ու հպարտ ենք, որ մեր տղաքն ու աղջիկները այդ «ընկերութիւնը» յաջողութեամբ անցուցին, զլել անցնելով բոլոր նախատեսութիւնները: Խումբին անդամներուն վրայ ցնցիչ տպաւորութիւն գործեց Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան վարժարան տրուած այցելութիւնը, երբ մանաւանդ մանկապարտեզի 250 մանուկներուն երգերն ու պարերը, խաղերն ու արտասանութիւնները լսեցինք: Շատ քաջալերական եւ յուսադրիչ էր մանաւանդ, այդ փոքրիկներուն ունեցած տեղեկութիւնները մեր մայր հայրենիքի մասին:

3.- Միջմասնաճիւղային փոխադարձ այցելութիւնները ընդհանրապէս օգտակար հանդիսացած են: Ի՞նչ միջոցներ պիտի առաջարկէք





«ՔԱՅԼ ՈՐ ԹՈՒՉՔ ԱՐԺԷ»

1976 թուականին ողբացեալ Սաթենիկ Ճանիկ Չագըր պատմական քայլ մը կ'առնէր մեծ նուիրատուութիւն մը կատարելով ՅԲԸՄ-ին: Ան Գահիրէի Բարեգործականին կը նուիրէր Գահիրէի Չամալէքի շրջանին մէջ գտնուող իր եռայարկ մենատունը եւ անոր կից ընդարձակ հողը:

Ողբացեալին կողմէ կատարուած այս պատմական քայլը թոյլ տուաւ պիտի առնէր 1996-ի Ապրիլին, երբ Գահիրէի Բարեգործականի այդ ժամանակուայ վարչութիւնը Սաթենիկ Չագըրի մենատան քովի պարապ հողը աճուրդով վաճառելէ ետք պիտի ստեղծէր ՅԲԸՄ-ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամը, եւ նոյն թուականէն սկսեալ որպէս աւանդապահը հիմնադրամին, պիտի ծաւալէր, բարեսիրական ու մշակութային բազմաբնոյթ գործունեութիւն մը, որուն հաշուական մանրամասները ամէն տարի կանոնաւոր կերպով «Սաթենիկ Չագըր Թղթածըրար» խորագրով կը հրատարակուին «Տեղեկատու»-ի մէջ:



1982 թուականին կը մահանար բարերարուհի Սաթենիկ Ճանիկ Չագըր եւ իր մարմինը կը փոխադրուէր Աղեքսանդրիա ու կ'ամփոփուէր Թօփալեան գերդաստանի ընտանեկան դամբարանին մէջ:

Ինչպէս ամէն տարի այս տարի եւս Գահիրէի ՅԲԸՄ-ի վարչութիւնը Կիրակի 24 Մայիսին խընդրամատոյց եղած էր հոգեհանգստեան պաշտօն կատարելու հանգուցեալի հոգւոյն ի հանգիստ եւ Սաթենիկ Չագըր հիմնադրամէն օժանդակութիւն ստացողներուն յիշեցնելու ու առիթ տալու որ իրենց ներկայութեամբ ու աղօթքով իրենց երախտագիտական զգացումները արտայայտեն:

Սակայն տարիները կը թաւալին, Չագըր հիմնադրամէն օգտուողներուն թիւը կը բազմապատուի... իսկ տարին գէթ մէկ անգամ երախտագիտական զգացում արտայայտողներու թիւը կը նուազի:

Արաքսի Տեօվլէթեան



«Կռունկ» երգչախումբի ելոյթներէն նկարներ

այս այցելութիւնները աւելի յաճախակի դարձնելու գծով:

Պ.- Այս ուղղութեամբ հաւանաբար տեղեակ էք, որ կազմուած է Արեւելեան Միջերկրականի երիտասարդական Յանձնախումբ մը, Բարեգործականի հովանաւորութեամբ, որուն պարտականութիւնն է յատուկ ծրագիր մը պատրաստել ՅԲԸ Միութեան հովանաւորութիւնը վայելող երիտասարդական շարժումներուն եւ կազմակերպութեանց միջեւ

առաւել սերտ կապ ստեղծել, մասնաւորաբար զարկ տալով միջմասնաճիւղային այցելութիւններուն: «Կռունկ»-ի այցելութիւնը մէկ օղակն է այդ ընդհանուր ծրագրին: Խիստ փափաքելի պիտի ըլլար որ ՅԲԸ-ի գեղարուեստական թէ մարզական խումբերը այցելէին տարբեր հայկական գաղութներ: Համոզուած ենք որ այդ այցելութիւնները նոր ուժ ու աւիւն պիտի տան բոլոր հայագաղութներուն:

Վարդան Սվաճեան



ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՇ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆ ՏՈՔԹ. ՌՈՒՔԵՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԵՒ ԻՐ ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ՏԻԿՆՈՋ

Կար ժամանակ երբ նախանձով ու ակնհայտ անարդար կը դիտելիք պետութիւններու դրոշակները որոնք մշտապէս կը ծածանէին իրենց դեսպանատուներուն մուտքին կամ առիթներով մայրուղիներու վրայ, մարզադաշտերու մէջ, մրցումներու մասնակցող պետութիւններու խումբերուն առաջնորդներուն ձեռքին ու սրտի կծկումով կ'ունկընդդէմէին իրաքանչիւր յաղթական խումբի օրհներգը եւ երբեմն մենք մեզի, երբեմն պոռթկալով կու տայինք Նոյն հարցումը: Արդեօք ե՞րբ մենք ալ պիտի ունենանք մերը: Ե՞րբ պիտի իրականանան մեր երազները ու հայը պիտի ներկայանայ աշխարհին ոչ այլ պետութիւններու՝ այլ ի՛ր դրոշակով, ի՛ր օրհներգով:

Արդէն 15 տարի է մենք ունինք այդ բոլորը ու կը զգանք այդ բոլորին մեզի առթած բերրանքն ու պատկանելիութեան հպարտութիւնը:

Եգիպտոսի մօտ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեանի դիւանագիտական առաքելութեան աւարտին առթիւ կայացած ողջերթի ընդունելութիւններն էին առիթը մտաբերելու շատ մօտիկ անցեալի մտորումներ ու գիտակցելու, թէ որքան թանկագին է ներկան, որուն գոյատեւումը պահպանելու համար պետք է մաքառիլ կարելի բոլոր միջոցներով:

Հինգշաբթի, 18 Յունիս 2009-ին Գահիրէի Ազգային Իշխանութիւնը ի պատիւ ՀՀ Դեսպանին եւ իր ազնուափայլ տիկնոջ, ողջերթի ընդունելութիւն մը կազմակերպած էր, որուն ներկայ էին Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հոգեւոր դասերը, Ազգային Իշխանութիւններու անդամներ, ՀՀ Դեսպանատան անձնակազմը, ՀՀ Դեսպանատան բարեկամներու խորհուրդի անդամներ, մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններու ատենապետներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան ողջերթի ճաշկերոյթին ընթացքին իմաստալից ելոյթ մը ունեցաւ: Ան նշեց թէ հայերը դարեր շարունակ Եգիպտոսի մէջ ունեցած են իրենց հոգեւոր հայրենիքը՝ եկեղեցին, իսկ այսօր ունին նաեւ

իրենց տեսանելի ու նկատարան հայրենիքը, որ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատունն է: Այա, ան դրուատեց դեսպանին Եգիպտոսի մէջ անցուցած հնգամեայ ծառայութեան ընթացքին, անոր իրագործած ձեռքբերումները, որմէ ետք հրաւիրեց Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Թեմական Ժողովներու ատենապետները Ազգային զոյք իշխանութիւններուն կողմէ դեսպանին յիշատակի նուէր մը յանձնելու:

Այնուհետեւ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեան իր ու իր ընտանիքին անունով շնորհակալութիւն յայտնեց իր պաշտօնավարութեան ընթացքին, եգիպտահայութեան կողմէ դեսպանութեան ցուցաբերուած աջակցութեան եւ օժանդակութեան համար:

Նոյն առթիւ Երեքշաբթի, Յունիս 23-ին Եգիպտոսի մօտ ՀՀ Դեսպանութիւնը ողջերթի երեկոյ մը կազմակերպած էր դեսպանատան պարտեզին մէջ, ուր ներկայ եգիպտացի եւ եգիպտահայ հանգամանաւոր անձերու կողքին կային օտար դիւանագետներ եւ դիւանագիտական առաքելութիւններու ներկայացուցիչներ:

Երեկոյին ընթացքին ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպանը յայտարարեց ծնունդը եգիպտացի եւ հայ գործարարներու ընկերակցութեան, գլխաւորութեամբ տիար Մակտի Չայիտի, ապա շնորհակալութիւն յայտնեց Եգիպտոսի կառավարութեան եւ եգիպտահայ համայնքին իր պաշտօնավարութեան ընթացքին անոնց ցուցաբերած բարիկամեցողութեան համար, ի շահ հայ-եգիպտական յարաբերութիւններու զարգացման:

Ընդհանրապէս տխուր են ողջերթի երեկոները եթէ այդ ողջերթը ոչ միայն բաժանում է, այլ աւարտ: Այս ողջերթը աւարտ չէ տոքթ. Կարապետեանի համար, այլ նոր հորիզոնի տակ սկիզբ՝ ուր վստահ ենք ան պիտի արձանագրէ արդիւնաւոր ու արգասաւոր գործունեութիւն:

Արաքսի Տեօվլեթեան



ՏԵՐՍԻՄԻ ՇԱՐՔ ՄԸ ԳԻՒՂԵՐՈՒ, ՍՐԲԱՎԱՅՐԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՐԱՅԵՐԷՆ ԵՆ

Ստորեւ մեր ընթերցողներուն կը ներկայացնենք www.noravank.am կայքէջին վրայ հրատարակուած, քրտական «Թիրոժ» ամսագրին մէջ թրքերէն լեզուով լոյս տեսած հետաքրքրական հարցազրոյց մը, զոր թրքերէնէ արեւելահայերէնի թարգմանած է յիշեալ կայքէջի աշխատակից Ռուբէն Մելքոնեանը:

Որպէս լուսաբանութիւն աւելցնենք թէ զգաւները իրանական (արիական) ցեղախումբ մըն են որոնք որպէս ցեղային փոքրամասնութիւն կ'ապրին արեւելեան Անատոլիայի (արեւմտահայաստան) բազմաթիւ նահանգներուն կարգին նաեւ Տերսիմի մէջ: Տերսիմի նահանգին անունը 1936-էն սկսեալ փոխուած է Թիւնճէլի-ի:

«Տ.»

Տերսիմցի զգաւ երաժիշտ Միքայէլ Ասլանը շրջանի երաժշտական ժառանգութեան կրողներէն ու շարունակողներէն է: Անոր երգացանկին մէջ բաւական մեծ թիւ կը կազմեն Տերսիմի հայկական մեղեդիները եւ երգերը: Ներկայիս Թուրքիոյ տարբեր վայրերուն մէջ ցարուցրիւ պահպանուած հայկական մշակութային շերտերու, այդ շարքին եւ երգերու հաւաքումն ու պահպանումը, անշուշտ մեծ կարեւորութիւն ունին:

Այս առումով, ինչպէս համշէնահայ Հիքմէթ Աքչիչէքի, այնպէս ալ Տերսիմցի Միքայէլ Ասլանի կատարած աշխատանքները արժանի են յատուկ ուշադրութեան: Արդէն քանի մը տարի է, ան իր համախոհներուն հետ կ'աշխատի «Տերսիմահայկական ժողովրդական երգերը» նախագիծին վրայ: Վերջերս քրտական «Թիրոժ» ամսագրին մէջ հրատարակուած էր հարցազրոյց մը Միքայէլ Ասլանի հետ, ուր ան կը խօսի ինչպէս այդ նախագիծի, այնպէս ալ Տերսիմի մէջ հայկական ներկայութեան տարբեր դրսեւորումներու մասին: Ստորեւ մասնակի կրճատումներով կը ներկայացնենք այդ հարցազրոյցը:

Հ. Տերսիմցիներու լեզուին, մշակոյթին, սովորութիւններուն մէջ, հայկական տարրերու գոյութեան մասին խօսակցութիւններ կան. այդ իրապէ՞ս այդպէս է:

Պ. Մեր քով, օրինակ, կայ «Կաղան» բառը, որ արեւմտահայերէնի մէջ կը նշանակէ Ամաւոր (Կաղանդ): Հնարաւոր է, որ մեր լեզուի (իմա՝ այսինքն) զգաւներէնիս - Ռ.Մ.) արեւմտահայերէնէն անցած է: Այդ տօնը մեր քով կը նշանակէ այնպէս ինչպէս հայերուն քով: Երբեք չեմ մոռնար, որ մեծհայրս մօրս հետ զրոյցներուն մէջ կ'ըսէր. «Աղջիկս, դուք այդ կաղանդը կը տօնէք, լաւ է, սակայն գոնէ ծովը մի պահէք,

ատիկա ամբողջութեամբ հայկական է»: Կաղանդին երեխաները տուները պտտելով շաքար կը հաւաքեն եւ անկէ ետք կը սկսի երեքօրեայ ծով: Կայ նաեւ «մեղաղ-մատաղ» բառը: Մենք մատաղ կ'ըսենք այն ճաշին, որ մարդու մահէն երեք օր ետք կու տան (կը հիւրասիրեն ցաւակցողներուն): Վերոնշեալներուն նման, հայկական տասնեակ մշակութային հասկացութիւններ, բառեր անցած են մեր լեզուին, մեր մշակոյթին: Անշուշտ այս ամենը մտորումներու առիթ կու տայ, թէ այդ ազդեցութիւնը ինչպէս եղած է: Այս պարզ օրինակներէն ալ կ'երեւի, որ հայերու եւ մեր (զգաւներու - Ռ.Մ.) միջեւ առկայ է զգալի մշակութային փոխազդեցութիւն: 2000 թուականին ես Երեւան գացի եւ այնտեղ ալ նման ընդհանրութիւններու շատ հանդիպեցայ: Երեւանի մէջ, մարդոց հետ զրուցելու ժամանակ լսեցի բազմաթիւ բառեր, տեսայ սովորութիւններ, որոնք մենք ալ կը գործածենք: Արեւելագիտութեան ինստիտուտ այցելեցի, այնտեղ հետաքրքրուեցայ Տերսիմի եւ Տերսիմցիներու վերաբերեալ մարդոց ունեցած կարծիքներով: Անոնք Տերսիմի եւ Տերսիմցիներու հանդէպ յատուկ հետաքրքրութիւն եւ սեր ունէին, որովհետեւ դժուար օրերուն այդ մարդիկ իրենց աջակցած են:

Հ. Ինչպէ՞ս ծագեցաւ «Տերսիմի հայկական ժողովրդական երգերը» նախագիծի գաղափարը:

Պ. Մեր քով՝ Տերսիմի մէջ, կարգ մը գիւղերու, սրբավայրերու անունները հայերէն են: Օրինակ՝ Փիլվենք, Ախձունիք: Ասոնք գիւ շատ հետաքրքրեցին: Ժամանակի ընթացքին հանդիպեցայ նաեւ հայկական ծագումով Տերսիմցիներու: Ասկէ գատ, զգալի թիւով Տերսիմցի հայեր արտագաղթած եւ բնակութիւն հաստատած են Գերմանիա եւ տակաւին կը տիրապե-



տեն հայերենին եւ հայոց մշակոյթին: Այս ամէնը զարգացուց Տերսիմի հայկական ժողովրդական երգերը հաւաքելու միտքը: Այս ուղղութեամբ սկսանք հետազոտութիւններ ընել, գիրքեր մշակել: Այդ միջոցով գտանք շուրջ 60 մեղեդի: Այնուհետեւ Տերսիմէն (սկատի ունիմ ոչ միայն ներկայիս Թիւնճեւիկ, այլեւ այն վայրերը, ուր հիմնականին մէջ կը բնակին ալեւիները, գըզըլպաշները) եւ մերձակայ վայրերէն մօտ 60 երգ ալ գտանք: Այսպէսով մեր գտած հայկական երգերու թիւը անցաւ 120-ը: Մեր այս աշխատանքները շուրջ երեք տարի է ի վեր կը շարունակուին: Անատոլիայի մէջ արեւմտեան երաժշտութիւնը առաջինը սորված, առաջինը մեղեդիները, երգերը հաւաքած, նոթագրած երաժիշտները հայեր էին: Օրինակ, Կոմիտասը, որ հայ երաժշտութեան ամենամեծ վարպետներէն է: Ես նոյնիսկ կ'ուզեմ հետեւեալ պնդումը ընել. անատոլիական երաժշտութիւն կոչուած երաժշտութեան կէտը յունական եւ հայկական է: Եթէ այս մասին չենք յիշատակեր, ապա կը նշանակէ, որ այդ ժողովուրդներու հանդէպ անարդար կը վարուինք:

3. Տերսիմը եւ տերսիմցիները այդ անարարութեան մէջ իրենց բաժինը ունին:

Պ. Յաւալի է, սակայն ներկայիս Տերսիմցիները եւ Տերսիմի մտաւորականները ներառեալ եւ ես, իրենց ժամանակին եղած դրացիներուն (իմա հայերու - Ռ.Մ.) մասին շատ լուրջ տեղեկութիւն չունին: Շատ չեն հետաքրքրուիր այդ վայրերով, լեզուներով, ինքնութիւններով, այդ աներուած եկեղեցիներով, լքուած գերեզմաններով: Մինչդէռ, այս ամէնը կորսուած նշաններ են եւ կը սպասեն բացայայտման: Տերսիմցիներէն շատերը համաշխարհային խնդիրներու մասին բազմաթիւ միտքեր կ'արտայայտեն, կը խօսին, կը պատմեն, սակայն երբ հարցնես. «Լաւ, քու գիւղիդ անունը ինչո՞ւ է այսպէս, ո՞ր լեզուով է», կը լռէ, այս նիւթին մասին, չես գիտեր ինչու, չէ մտածած: Երբ խօսք կը բացուի հայերու մասին, անոնց միտքը կու գան ոչ թէ կոտորածները, տեղի ունեցած աղետները, այլ հայերու ոսկիները: Շատ ամօթալի վիճակ մըն է: Հայ ժողովուրդի նկատմամբ կատարուածներուն համար մենք ալ պէտք է մեր խիղճին հարցեր տանք: Զիւրտ ժողովուրդն ալ այս հարցին մէջ մեղսակից է:

Անոնց քով տակաւին չեն քննարկուիր Համիտիէ գունդերուն կողմէ կատարուած դաժանութիւնները: Այդ աւարառուները այսօրուայ սերունդներու պապերը չէին: Այս սերունդը ե՞րբ պիտի ամբաստանի իր պապերու ցեղասպան անանդոյթին հետ: Հայկական կոտորածի ժամանակ մեր պահպանած լռութեան վերաբերեալ Սըլո Զըզը (ըստ երեւոյթին՝ զազա աշուղ - Ռ.Մ.) ողբ մը ունի, ուր կ'ըսէ. «Այս հայկական գաղթի հանդէպ լուռ կը մնաք, կը մտածե՞ք արդեօք, որ վաղը ձեր վերջն ալ անոնց նման պիտի ըլլայ»: Այս մասին ան կ'ըսէր տակաւին 1938-էն առաջ* :

3. Ի՞նչ նպատակ ունի «Տերսիմի հայկական ժողովրդական երգեր» նախագիծը:

Պ. Մենք այս նախագիծը կը ցանկանք կեանքի կոչել՝ մեր խիղճը քիչ մը հանգստացնելու, մենք մեզի հետ, թելուզ քիչ մը ամբաստանելու համար: Այս տարածքներուն մեզի մնացած ժառանգութեան մէջ հայերու դերը մեծ է: Պետութիւնը որքան ալ շրջանի գիւղերու անունները փոխէ, միեւնոյնն է՝ մենք ներկայիս ալ այդ գիւղերը հին անուններով կը կոչենք, եւ այդ անուններուն մեծ մասը հայերէն է: Մենք վկան ենք այս յիշողութեան. անոնց գիւղերուն, համատեղ գործածած սրբավայրերուն, աներուած եկեղեցիներու պատերուն, գերեզմանաքարերուն եւ հիմա ալ երգերուն վկան ենք: Եւ այս վկայութիւնը պէտք է ակնյայտ դարձնենք, բարձրաձայնելք: Եթէ մենք կարողանանք այս բարձրաձայնել, թերեւս ուրիշներ ալ նոյնը կ'ընեն Տրապիզոնի եւ Էրզրումի Մէջ:

3. Իսկ Տերսիմի մէջ ընդհանրապէս հայ չե՞ մնացած:

Պ. Ես կը կարծեմ, որ Տերսիմի հայերուն մէկ մասը մնացած է Տերսիմի մէջ եւ ալեւիականութիւն ընդունած, որպէսզի փրկուի: Ալեւիականութիւն ընդունելու հարցին մէջ, անշուշտ, նշանակութիւն ունեցած է նաեւ այն, որ հայերը իրենք զիրենք ալեւի մօտ կը զգային ալեւիներուն, քան սիւննիներուն: Սակայն, միեւնոյնն է, ալեւիականութիւնը ընդունած են, որպէսզի կարենան անոր մէջ իրենք զիրենք թաքցնել:

Թրքերէնէ թարգմանեց
Ռուբէն Մելքոնեան
25 Յունիս 2009

* 1938 թուականին Թուրքիոյ մէջ դաժանօրէն ճնշուած է Տերսիմի ապստամբութիւնը, որուն ընթացքին կոտորուած են բազմաթիւ Տերսիմցիներ, նոյնպէս Հայոց Ցեղասպանութեան ժամանակ հոն ապաստանած հայեր, որոնցմէ շատերը աքսորուած են, ենթարկուած են դաժան չարչարաններու: Որոշ շրջանակներ այդ դէպքերը կ'որակեն որպէս Տերսիմի ցեղասպանութիւն:



ԳՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՒ ՎԱՐՊԵՏ ՊԵՏՐՈՍ ԱՍԼԱՆԵԱՆԻ ՐԵՏ ԳԵՂԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԻՐ ԱՍՊԱՐԷԶԻ ՅԻՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Վերջերս Մոնթրեալի ՅԲԸՄիութեան Կեդրոնին մէջ տեղի ունեցած է նախկին եգիպտահայ, այժմ գանատահայ հանրածանօրթ գեղանկարիչ՝ Պետրոս Ասլանեանի ստեղծագործութիւններու ցուցահանդէսը, իր ասպարեզի յիսնամեակին առթիւ:

Այս կապակցութեամբ Մոնթրեալի մէջ լոյս տեսնող «Ապագայ» շաբաթաթերթի թղթակիցը հետեւեալ հարցազրոյցը ունեցած է արուեստագետին հետ:

Յ. Կրնա՞ք խօսիլ նկարչական ասպարեզի սկզբնական շրջանի ձեր փորձառութիւններուն եւ մտածումներուն մասին:

Պ. Իմ ծննդավայր Աղեքսանդրիայի մէջ դպրոցական օրերես իմ մէջս կը զգայի սեր եւ հակում դէպի նկարչութիւն: Դեռ զիտեմ զգացի նաեւ կարողութիւնը գանազանելու եւ գնահատելու լաւ եւ արժեքաւոր գործերը բաղդատմամբ իբր գործ եւ վաճառքի համար կատարուած գործերու: Այդ օրերուն կը սիրէի մանաւանդ սեւով ճերմակի վրայ գծագրութիւնը եւ հետագային անդրադարձայ թէ որքա՞ն կարելոր է նկարիչի մը համար սկսիլ եւ զարգացնել նախ պարզ մատիտով, յետոյ ածուխով, չինական մելանով, եւլն: Սեւ-ճերմակ նկարչութիւնը կը տաշէ արուեստագետին ձեռքի թեթեւութիւնը: Կարելի չէ յաջող կերպով մտնել գոյներու աշխարհին մէջ առանց սեւ-ճերմակի ճամբէն անցնելու. անկախ դուրս կը բանայ գունաւոր արտայայտութեան:

Յ.Այս յիսուն տարիներու ընթացքին կը խորհի՞ք որ ձեր ոճը փոխուեցաւ կամ ազդուեցաւ ձեր բնականութեան փոփոխումներով եւ ուրեմն նկարչու տարբերութեան բերմամբ:

Պ. Ոճը արուեստագետին ստորագրութիւնն է, որ տարիներու ընթացքին կը զարգանայ բայց չի փոխուիր: Մանաւանդ գոյները ամբողջ կեանքի ընթացքին կը մնան նոյնը, բայց անոնց ներկայացնելու կերպն է որ կրնայ փոխուիլ: Այո, նկարած եմ եգիպտոսի մէջ, Յունաստանի ծովեզերքները, Քէպէքի եւ Գանատայի գանազան շրջաններուն մէջ, Զայաստանի մէջ: Թէեւ

միջավայրը եւ նկարը կը փոխուին, բայց անոնց մթնոլորտը զգալու եւ այդ զգացումները գոյներով արտայայտելու ոճը չի փոխուիր:

Յ. Գոյներու որոշ նախասիրութիւն մը ունի՞ք թէ ատիկա կախեալ է ձեր նկարած նկարէն:

Պ. Մովը (մանիշակագոյնը) եւ կապոյտը շատ կը սիրեմ: Բնութեան տեսարաններու մէջ երկինքի եւ ծովու կապոյտը, լոյսի կամ ձիւնի ճերմկութիւնը, որ իրականութեան մէջ ճերմակ չէ այլ գոյներու խառնուրդ մը, կապուած է զգացումներուդ հետ: Գոյներու տաքութեան եւ պաղութեան յարաբերութիւնները շատ կարելոր են: Միւս կողմէ, կարմիրը թակարդ մըն է, որ դիտողը անմիջապէս կը գրաւէ: Ծախելու համար լաւ գոյն է, մանաւանդ երբ զօրաւոր contrast - ներ կու տաս: Ես ալ կարմիր կը գործածեմ եւ contrast միշտ կայ, բայց պէտք է կշիռքը պահուի. անկեղծ պէտք է ըլլայ, արժեքները պէտք է շիտակ ըլլան, եւ զգացումները տաշուած պէտք է ըլլան. nuance-ները, երանգաւորումները պէտք է պահուին:

Յ. Ձեր գործերը իրապաշտ նկարեր են - բնութեան տեսարաններ, պարզ մարդիկ, եւլն: Բնաւ ստեղծա՞ծ էք վերացական (abstract) նկարչութիւն, եւ ի՞նչ է ձեր կարծիքը այդ ժանրի մասին:

Պ. Գործերուս մէջ կը տեսնէք թէ մանրամասնութիւններ չկան, ուրեմն իրապաշտութենէն քիչ մը դուրս կ'ելլեմ, բայց երբեք ամբողջովին fantastique-ի չեմ երթար որ իրականութենէն ամբողջովին կը հեռանայ: Իմ գործերուս մէջ կայ գոյներու բաղադրութիւն որ զգացումներ կը յառաջացնէ, բայց կայ իրականութիւն մը: Թէ դիտողը ո՞ր չափով կամ ինչպէ՞ս կը տեսնէ ատիկա չեմ գիտեր: Ես կու տամ իմ տեսածս, իմ զգացածս:

Յ.Այս ցուցահանդէսին նո՞ր գործեր ներկայացուած են թէ կան ուրիշ ժամանակներէ հաւաքածոներ:

Պ. 75 տոկոսով նոր գործեր են, մեծ մասամբ Քէպէքի Chateau Frontenac-ի շրջապատէն,

շար. էջ 14 →



ԵԳԻՊՏԱՐԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍՆԵՐ ԳԱՇԻՐԵԻ ԵՒ ԱՂԵՔԱՆՊՐԻՈՅ ՄԵՋ 2009-Ի ՏԱՐԵՎԵՐՋԻՆ

2008 թուականին ի վեր Գահիրեի ԶԲԸՄ-ը սկսած է իրագործել եգիպտահայ նկարիչներու գործերուն թուային արխիվավորումը (digital archiving), որուն նպատակն է ստեղծել անոնց գործերուն թուային ցանկը, որ ձեռով մը կանխել անոնց կորուստը մեր յիշողութիւնէն եւ պատմութիւնէն:

Այս ծրագիրին կարելորութիւնը զգացուեցաւ երբ անցեալ աշնան Աղեքսանդրահայ գեղանկարիչ Զամբար Զամբարձումեանի ծննդեան հարիւրամեակին առթիւ ցուցահանդէս մը կազմակերպուեցաւ Աղեքսանդրիոյ մէջ: Այս ցուցահանդէսին համաբաւոր նկարիչին գործերուն կողքին ցուցադրուեցան նաեւ այլ եգիպտահայ նկարիչներու գործերը: Ցուցահանդէսը որ տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ Atelier-ի մէջ շատ լայն գնահատանք ստացաւ հայ եւ եգիպտացի շրջանակներէ:

Իսկ յառաջիկայ աշնան ԶԲԸՄ-ը պիտի կազմակերպէ երկու ցուցահանդէսներ : Առաջինը Գահիրեի Օբեքայի համալիրի շրջաբակին մէջ գործող Զանակեր կեդրոնին մէջ 17-էն 26 Նոյեմբերին, ուր եգիպտահայ նկարիչներու գործերէն ընտրանքի մը պիտի ներկայացուի, երկրորդը՝ տեղի պիտի ունենայ Աղեքսանդրիոյ Գրադարանին մէջ համագործակցութեամբ ԶԲԸՄ-ի որ նուիրուած պիտի ըլլայ երգիծանկարիչ

Ալեքսանտր Սարուխանի գործերուն իր այլազան թեմաներով:

Արդէն 600-է աւելի գործեր պատճենահանուած եւ թուայնացուած են ԶԲԸՄ-ի կողմէ: Անոնց կարգին են գործերը Երուանդ Տեմիրճեանի, Վահրամ Մանավեանի, Ալեքսանտր Սարուխանի, Աշոտ Չօրեանի, Վահան Զովիւեանի, Օննիկ Աւետիսեանի, Արդէ Թոփալեանի, Զամբար Զամբարձումեանի, Բիւզանդ Կոճամանեանի, Սիմոն Շահրիկեանի, Ժիրայր Փալամուտեանի, Ճոն Բաբազեանի, Սիմոն Սամսոնեանի, Էլիզ Փարթամեանի, Յովհաննես Տնկճեանի, Արմենուհի Ժամկոչեանի, Նորա Իփեքեանի, Զրանդ Քէշիշեանի, Շանթ Աւետիսեանի, Մարի Արթիսեանի, Ալին Պըլըքտանեան-Ճիգմեճեանի, Վահան Դելփեանի եւ Գեղամ Ճղալեանի:

Ապագային ԶԲԸՄ-ը նպատակ ունի ստեղծել սոյն նկարներուն վերաբերեալ յատուկ կայքէջ մը եւ հրատարակել գիրք մը նուիրուած եգիպտահայ նկարիչներու գործերուն:

Նշենք թէ սոյն երկու ցուցահանդէսներուն ընդհանուր պատասխանատուութիւնը Գահիրեի ԶԲԸՄ-ի կողմէ յանձնուած է եգիպտահայ ծանօթ արուեստագետ Զրանդ Քէշիշեանի:

Արփի Խաչերեան

շար. էջ 13 Էս

բայց միշտ ալ կ'ունենամ անցեալի գործերու կտորներ:

Յ. Զայաստան եղած էք եւ նկարած: Կրկին ծրագիր ունի՞ք Զայաստան երթալու եւ նկարելու: Ի՞նչ բան ձեզ կը հետաքրքրէ Զայաստանի մէջ:

Պ. Անպայման պիտի երթամ, եւ կը ծրագրեմ հոն ալ ցուցահանդէս կազմակերպել: Կը նկարեմ ամէն ինչ, որեւէ կացութիւն որ ինձի համար մթնոլորտ մը կը յայտնաբերէ: Երբ հոն կը նկարէի, երբեմն երիտասարդ նկարիչներ կու գային եւ կ'ըսէին «ինչո՞ւ այդ տկար գոյները կը գործածես, մոխրագոյնը, եւլն.»: Կը զարմանամ որ ինչո՞ւ իրենք կ'անտեսեն իրենց բնիկ գոյները եւ կ'անցնին fantastique գոյներու: Այո՛, Մարտիրոս Սարեան, Սինաս Աւետիսեան, Գրիգոր

Խանջեան եւ ուրիշներ, անոնք ալ վառ գոյներով հոյակապ ստեղծագործութիւններ տուած են, բայց անոնց ոտքերը միշտ գետնին վրայ մնացած են, իրականութենէն դուրս չեն ելած: Չօրաւոր արեւի լոյսին եւ վառ գոյներուն կողքին շուքն ալ կայ, պետք է այդ ալ տեսնել:

Յ. Պրն. Ասլանեան, 50 տարի ետք, կը ծրագրէ՞ք սոյն թափով շարունակել նկարել:

Պ. Անկասկած: Ես չեմ կրնար չնկարել: Կը ծրագրեմ նաեւ բոլոր գործերուս հաւաքածոյի հատոր մը հրատարակել ապագային: Ընդհանուրութիւններ, շնորհակալութիւն եւ յաջողութիւն:

Թղթակից



Ժիրայր Դանիելեան Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՇԸ ՍՓԻԼՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏՈՒՈՂԻՐԻՆ

Յունիս 3-ին ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը իր անդրանիկ պատուոգիրը շնորհած է Պէյրութի ՀԲԸ Միութեան Յովակիմեան-Մանուկեան, Դարուիի Յակոբեան երկրորդական վարժարանի տնօրէն, լիբանանահայ խմբագիր, մանկավարժ, գրաքննադատ եւ հասարակական գործիչ տիար Ժիրայր Դանիելեանի:

Պատուոգիրին տուչութիւնը տեղի ունեցած է Երեւանի Կոմիտասի անուան սենեկային երաժշտութեան դահլիճին մէջ, Սփիւռքի Նախարարութեան եւ Հայաստանի Գրողներու Միութեան գործակցութեամբ, որուն ընթացքին սփիւռքահայ մտաւորականին կեանքը ըստ արժանւոյն ներկայացուած է:

ղարտութեան պահպանման, Հայաստանի եւ Սփիւռքի մտաւորականների համագործակցութեան խնդիրները:»

Նախարարուիին հանդիսատեսի բուն ծափահարութիւններուն ներքեւ վաստակաշատ մտաւորականին շնորհած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան անդրանիկ պատուոգիրը եւ ժամացոյց մը նուիրած՝ որուն վրայ Հայրենիք - Սփիւռք համագործակցութեան խորհրդանիշը պատկերուած է:

Ժիրայր Դանիելեան պարգեւատրուած է նաեւ ՀՀ Մշակոյթի Նախարարութեան, ՀՀ Գրողներու Միութեան պատուոգիրերով եւ ՀՀ Թատերական գործիչներու միութեան մետալով:



ՀՀ-ի Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան Տիար Ժիրայր Դանիելեանի կը յանձնէ պատուոգիրը

ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան, շնորհաւորելով վաստակաշատ խմբագիրը, յատկապէս կարելորած է անոր Սփիւռքի մէջ իրականացուցած 40- ամեայ կրթական եւ մանկավարժական գործունեութիւնը նշելով «Մատաղ սերունդներու հայեցի դաստիարակման գործում այլեւս իր անուրանալի տեղն է զբաղեցնում Ժիրայր Դանիելեանը: Նա կարող էր լինել յաջողակ եւ հարուստ գործարար: Սակայն «Հասկ», «Հայկազեան Տարեգիրք», « Կամար» եւ այլ թերթերի, ամսագրերի, բազմահատոր գրքերի խմբագիրն այս ամէնից գատ իրականացրել է նախ ծաւալուն հասարակական գործունեութիւն՝ ծառայելով Պէյրութի հայ համայնքին: Մեծ մտաւորականի գործունեութեան առանցքում են եղել համայնքում մայրենի լեզուի անա-

Սփիւռքահայ մտաւորական Ժիրայր Դանիելեանը մեծարելու նուիրուած այդ երեկոն իրենց անգուգական ելոյթներով փայլեցուցած են ՀՀ վաստակաւոր արուեստագիտուի Լալա Մաւցականեանը (ընթերցում), Կիւմրիի տուտուկահարներու համոյթը, «Կոմիտաս» երգչախումբի մեներգչուի Հեղինէ Համբարձումեանը, միջազգային մրցանակներու դափնեկիր, դաշնակահարուի Արմինէ Ահարոնեանը եւ ուրիշներ:

«Տեղեկատու»-ն եւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակը յարգարժան մտաւորականին ու կրթական մշակին կը մաղթեն անսպառ կորով ու բեղուն գործունեութիւններու նոր տասնամեակներ:

«Տ.»



«ԱՐԻ ՏՈՒՆ»

ՀՀ Սփիւռքի Նախարարությունը նախաձեռնած է « Արի Տուն» անունով համահայկական երիտասարդական խիստ կարելոր ծրագրի մը:

Այս ծրագիրին նպատակն է Սփիւռքէն 16-25 տարեկան երիտասարդական խումբերու համար առիթ ստեղծել Հայաստան այցելելու եւ ծանօթանալու իրենց հայրենիքին, իրենց հասակակիցներուն, առնչուելու հայրենի բնութեան, պատմութեան ու մշակոյթին, զգալու հայրենի հողին ուժը ու սիրելու հայրենիքը:

«Արի Տուն» ծրագրին առաջին հանգրուանը տեղի կ'ունենայ 14 Էն 31 Յուլիս 2009: Երթուղարձի ծախսերը կը հոգայ Սփիւռքը, իսկ Հայաստանի մէջ կեցութեան ամբողջական ծախսերը ՀՀ Սփիւռքի Նախարարությունը:

Ուրախ ենք որ Գահիրէէն «Արի Տուն» ծրագրին կը մասնակցին վեց հոգի

Գալուստեան Ազգային Վարժարան

Լեւոն Արթինեան Գ. Երկրորդական
Վարդան Շուշանեան Գ. Երկրորդական

Նուպարեան Ազգային Վարժարան

Այլին Թրայեան Գ. Երկրորդական
Մերի Տէր Յակոբեան Գ. Պատրաստական

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Հեկոպոլիս

Արմէն Իրատեան Գ. Երկրորդական ՆԱՎ

ՀԲԸՄ Գահիրէ

Ժիրայր Սուլթանեան Գ. Երկրորդական ՆԱՎ

Վերոյիշեալներէն առաջին չորսը հովանաւորուած են Գահիրէի Ազգային Առաջնորդարանին՝ եւ վերջին երկուքը Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Զագըր Ֆոնտին կողմէ:

Բարի ճանապարհ, բարի կեցութիւն եւ լիցքաւորուած վերադարձ կը մաղթենք մեր պատանիներուն:



Ձախէն աջ՝ Ժիրայր Սուլթանեան, Լեւոն Արթինեան, Այլին Թրայեան, Այլ մասնակից մը, Արմէն Իրատեան, Վարդան Շուշանեան եւ Մերի Տէր Յակոբեան



ՀԱԼԵՊԻ ՀՐԸՄ-Ի ԼԱԶԱՐ ՆԱՃԱՐԵԱՆ ՓԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

10-17 Յուլիսին Երեւանի մէջ տեղի ունեցած է հայերէն լեզուի, մշակոյթի եւ հայկական գիտելիքներու իմացութեան համահայկական մրցումը, որուն մասնակցած են 12 երկիրներու դպրոցական խումբեր, թիւով 133 մասնակից:

Աւարտական մրցոյթը տեղի ունեցած է Երեւանի Առնօ Պապաջանեանի անուան հանդիսասրահին մէջ:

Մրցոյթին յաղթական հանդիսացած Սուրիոյ խումբը գլխաւոր մրցանակին արժանացած է: ՀՐԸՄ-ի Հայկական Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպենկեան վարժարանի մասնակիցներ Մարիա Շահինեան,

Արփի Տէկիրմենճեան եւ Նուշիկ Թիւթիւնճեան ստացած են մրցանակներ: Մարիա Շահինեան առաջին մրցանակ նուաճած երեք ուսանողներէն մէկն էր, մինչ Արփի Թիւթիւնճեանը մաս կը կազմէր երկրորդ մրցանակին արժանացած երեք մրցանակակիր ուսանողներուն:

Կայացած այս մրցոյթին նպատակն էր սփիւռքահայ ուսանողը քաջալերել հայրենիքին հանդէպ ունեցած իր սերը խորացնելու եւ հայերէն լեզուին, գրականութեան, մշակոյթին ու պատմութեան մասին իր ունեցած գիտելիքները զարգացնելու:

ԺԵՐԱՐՏ ԹԻՖԼԵՆՔԵԱՆ ՀՐԸՄ-Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը հաճոյքով կը յայտարարէ թէ՛ Պրն. Ժերարտ Թիւֆլէքճեան ՀՐԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ նշանակուած է: Պրն. Թիւֆլէքճեան կը յաջորդէ շրջանաւարտ ատենապետ Պրն. Աւետիս Տէմիրճեանին, որ երկարամեայ ու օգտաշատ ծառայութիւն մատուցած է իր պաշտօնավարութեան ընթացքին:

Պրն. Թիւֆլէքճեան Լիբանանի հանրայայտ գործարարներէն է եւ ի ծնէ անդամ Բարեգործականի: Շրջանաւարտ է Միութեան Յովակիմեան-Մանուկեան Վարժարանէն ու գործօն դեր կը կատարէ լիբանանեան բազում կազմակերպութիւններու մէջ: Որպէս ատենապետ, Պրն. Թիւֆլէքճեան պիտի վերահսկէ ՀՐԸՄ-ի Լիբանանի Շրջանակայինի ընդարձակ յայտագիրները իրականացնելու ճիգերուն, իրեն ենթակայ հաստատութիւններէն եւ համայնքային մարմիններէն ներս:

ՀՐԸՄ-Ի «ԱՆՂՐԱՆԻԿ» ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՃԱՄԲԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Յուլիսի 15-ին Հայաստանի մէջ բացումը կատարուած է ՀՐԸՄ-ի կազմակերպած երկրորդ «Անդրանիկ» սկաուտական ճամբարին:

ՀՐԸՄ-ի Հայաստանի մէջ իրագործած զանազան ծրագիրներուն մաս կազմող սկաուտական ճամբարը երկրորդ տարին ըլլալով կայացած է Հայաստանի Լոռիի մարզի Լեւոնտով գիւղին մէջ գտնուող Միութեան ճամբարին մէջ: Ինչպէս անցեալ տարի այս տարի եւս սկաուտական ճամբարին մասնակցած են Իրանի, Իրաքի, Սուրիոյ, Լիբանանի եւ Ամնահանգներու մասնաճիւղերը ներկայացնող քաղաքներէն շուրջ 300 սկաուտներ եւ արեւուշներ, ինչպէս նաեւ Հայաստանի սկաուտական խումբի անդամները: Նշենք, թէ սկաուտական ճամբարին պատասխանատուն է ՀՐԸՄ-ՅԵԸ-ի (Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն) Լիբանանի Վարիչ քարտուղար՝ Գեորգ Սանթուրեանը:

Գուգարաց Թեմի Տաւուշի փոխառաջնորդ Սասուն ծայրագոյն վարդապետի աղօթքով կայացած է ճամբարին բացումը, որուն ընթացքին հոգեհանգըս-

տեան արարողութիւն կատարուած է Թեհրան-Երեւան օդանաւի աղետի զոհերուն հոգիներուն ի հանգիստ, որոնց մէջ էին նաեւ ճամբարին մասնակցելու համար ճամբայ ելած արեւուշներ՝ Շողեր եւ Նայիրի Ստեփանեան քոյրերը:

Ճամբարի բացման ներկայ եղած են նաեւ տեղւոյն թեմի հոգեւորականները, համայնքին եւ ՀՐԸՄ-ի պատասխանատուներ եւ Երեւանէն ժամանած բազմաթիւ հիւրեր: Տեղի ունեցած է դրօշակներու բարձրացման արարողութիւն եւ մասնակից խումբերու տողանցք:

Սկաուտական ճամբարի տեւողութեան ընթացքին բացի սկաուտական կեանքի առօրեայէն ու դաստիարակչական գրոյցներէն, մասնակիցները պիտի շրջին Հայաստանի տեսարժան վայրերը, այցելեն Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ներկայ ըլլան մշակութային ձեռնարկներու եւ ծանօթանան Հայաստանի պատմական յուշարձաններուն:

«Տ.»

Յաջորդ էջին վրայ տեսնել ճամբարէն նկար մը



ՀԱՆՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՅԻՍ ՄԵԿԵԱՆ ՔԵՐՄԵՍԱԸ



Մայիս 1, 2009

Արդեօք Ուրբաթ Մայիս մեկին ու՞ր կրնայիք զըտնել հսկայ սահնակներ, հեծիկներ, թաւալող գնդակ, շոգեկառք, trampoline եւ գանազան տարբեր տեսակի խաղեր: Անշուշտ միայն ՀԱՆՐԱՆՈՒԹՅԱՆ Մայիս մեկեան քերմեսին:

Այդ օր ՀԱՆՐԱՆՈՒԹՅԱՆ առաւօտեան ժամը 11-էն իր դռները բացաւ մեր գաղութի փոքրիկներուն, պատանիներուն եւ մեծահասակներուն առջեւ, որպէսզի վայելեն իրենց Մայիս 1-ի արձակուրդը զուարճալի, հետաքրքրական եւ ապահով միջավայրի մը մէջ:

Ներկաները վայելեցին տարբեր խաղերը որոնք պատրաստեր էին սրահի երիտասարդները եւ ճաշակեցին սրահի տիկիներուն պատրաստած համով խորովածը: Երաժշտութեան ձայնասփռումը D.J Armen-ի պատասխանատուութիւնն էր: Մօտ 20

խաղեր սարքուած էին: 12 խաղերու մասնակցողներէն շահողները մրցանակներ ստացան: Յատկապէս այս առթիւ, մանուկներու համար 6 խաղալիքներ վարձուած էին ինչպէս նաեւ հսկայական վրաններ լարուած էին: ՄԵկ խօսքով մարզակումբը վերածուած էր պատանեկան ընդարձակ խաղավայրի մը:

Խրախճանքը աւարտեցաւ գիշերուայ ժամը 8-ին: Բոլոր ներկաները լաւ տպաւորուած մեկնեցան: Տարեցներէն ոմանք նշեցին թէ այս քերմեսը իրենց պատանեկան տարիներու, վաթսունական եւ եօթանասունական թուականներուն, Շամ Էլ Նեսիմի առթիւ կազմակերպուած տօնախաղերը յիշեցուց: Ներկաները մաղթեցին որ երիտասարդներուն կողմէ նման հանդեսներ կրկին կազմակերպուին:

Արփի Խաչերեան



Հայաստանի Լոռիի մարզի Լերմոնտով գիւղին մէջ գտնուող ՀԲԸՄիութեան ճամբարը



ԱՂԵՔՍԱՆՈՒԹՅԱՆ ԸՄԸՆ ՆՈՒՊԱՐ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՊԱՍՔԵԹ ՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Մեկ տարուայ ընդհատումէ մը ետք, Ուրբաթ 24, Շաբաթ 25 եւ Կիրակի 26 Յուլիս 2009-ին, Աղեքսանդրիոյ ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ը կազմակերպեց եգիպտահայ գաղութին մէջ աւանդութիւն դարձած պասքէթ պոլի մրցաշարքը, նուիրուած եգիպտոսի 23 Յուլիսի յեղափոխութեան 57-րդ տարեդարձին:

Հակառակ որ Յուլիս 2008-ին Աղեքսանդրիոյ ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ը, ինչպէս միշտ, տարուան մրցաշարքերու բացումը կատարած էր, սակայն Գահիրէի ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ի եւ ԶՄԸՍ Արարատի խումբերուն միջեւ գոյութիւն ունեցած անհամաձայնութեան պատճառաւ, ԶՄԸՍ Արարատը մրցումէն մի քանի օր առաջ քաշուած էր մրցաշարքէն:

Օգոստոս 2008-ին, ԶՄԸՍ Կամքի վարչութիւնը ջնջած էր իր դաշտին վրայ կայանալիք եգիպտահայ մրցաշարքը, պնդելով թէ, որքան ատեն որ անհամաձայնութիւն կայ ակումբներուն միջեւ ու կարելի չէ բոլորին ներկայութիւնը ապահովել, նախընտրելի է մրցաշարքերը դադրեցնել: Այս որոշումին համախոհ էր նաեւ Սրբուհի Թերեզայի վարչութիւնը:

Գահիրէի ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ի վարչութիւնը 2008-ի Հոկտեմբերին, իր մրցաշարքի կայացման թուականին, տօնեց ակումբին Հելիոպոլիս փոխադրութեան 50-ամեակը, այլ ձեռնարկներու կողքին կազմակերպելով նաեւ պասքէթ պոլի մրցաշարք մը որուն իրենց մասնակցութիւնը բերին, այս առթիւ Հալէպէն հրաւիրուած ՀԵԸ-ի պասքէթ պոլի եկստե խումբերը:

Սակայն եգիպտահայ գաղութին յատկանշական դարձած եւ մի քանի տասնեակ տարիներու կէտք ունեցող ամենամեայ 5 մրցաշարքերը իրենց անփոխարինելի տեղը ունին բոլորին սրտերուն մէջ: Ուստի լուրջ աշխատանք պէտք էր տարուեր անհամաձայնութիւնները վերջնականապէս հարթելու եւ գրաւոր կանոնագիր մը պատրաստելու համար: Տրուած ըլլալով որ 2009-ի Օգոստոս 9-19 Հայաստանի մէջ Համահայկական Խաղերը տեղի պիտի ունենան եւ եգիպտոսէն անպայման տողոց պասքէթ պոլի հաւաքական մը (կամ երկու) պիտի մասնակցի (ին), հաշտութեան դաշինք մը պէտք է որ կնքուեր մարզական ակումբներուն միջեւ: Շնորհիւ տարուած լուրջ աշխատանքի կարելի եղաւ կանոնագիր մը պատրաստել եւ Յուլիս 2009-ին, Աղեքսանդրիոյ ԶՄԸՍ Կամքի հրաւերով ու 5 ակումբներէ ներկայացուցիչներու ներկայութեամբ կանոնագիրը ընդունուեցաւ եւ ստորագ-

րուեցաւ:

Ուրեմն, ուրբաթ 24 Յուլիս 2009-ին բացումը կատարուեցաւ տարուան մրցաշարքերուն հովանաւորութեամբ եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ նախագահութեամբ Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի ատենապետ՝ տէր եւ տիկին Անդրանիկ Մեսրոպեանի: Առաջին մրցումը Սրբուհի Թերեզայի եւ Աղեքսանդրիոյ ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ի խումբերուն միջեւ էր: Հակառակ որ խաղին մակարդակը միջակ էր, սակայն հետաքրքրական էր, քանի որ ուժերը բաւական հաւասար էին եւ մրցումը աւարտեցաւ 58-48 ի նպաստ Աղեքսանդրիոյ ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ին: Ակումբը երկար ժամանակէ ի վեր այսքան բազմամարդ չէր, կարծեք Գահիրէի բոլոր հայութիւնը Աղեքսանդրիա եկած էր խոյս տալով Գահիրէի տաքէն: Երկրորդ մրցումը ԶՄԸՍ Արարատի եւ ԶՄԸՍ Կամքի միջեւ էր: Կամքի երբեմնի լաւ խաղացող մարզիկներէն շատեր տարիքի բերմամբ քաշուած էին դաշտէն, սակայն ուրախալին այն է, թէ անոնց տեղ եկած էին լեցնելու մեծ թիւով պատանիներ, որոնք թէպէտ անփորձ՝ սակայն ապագայ կը խոստանան: Արարատի խումբը իր սովորական խիզախ խաղով ջախջախիչ յաղթանակ մը տարաւ պատանիներուն վրայ: Միակողմանի խաղը աւարտեցաւ 68-36 արդիւնքով:

Շաբաթ 25 Յուլիս 2009-ին մեկ մրցում կար յայտագրին վրայ, Գահիրէի ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ը ընդ դէմ ԶՄԸՍ Արարատի: Այս երկու խումբերուն միջեւ որեւէ մրցում մեծ լարուածութիւն կը ստեղծէ թէ խաղացողներուն եւ թէ դիտողներուն միջեւ: Մրցումը սկսաւ պրկուած ջիղերով եւ այդպէս ալ շարունակուեցաւ մինչեւ վերջ: Հակառակ որ 3 կիսախաղերուն ընթացքին ԶՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ի տղաքը միշտ մի քանի կէտերու առաւելութիւն կը պահէին, սակայն խառնաշփոթութիւնն ու եռանդի պակասը զգալի էր տողոց մէջ: Չորրորդ կիսախաղին խումբերը մի քանի անգամ հաւասարեցան, նոյնիսկ Արարատը մի քանի թիւով ալ անցաւ:

Մրցումին աւարտին կը մնար միայն 2 երկվայրկեան. արդիւնքը հաւասար էր սակայն գնդակը Արարատին հետ: Մեկ երկվայրկեանի պէտք եղաւ գնդակը դուրսէն ներս խաղալու եւ մեկ երկվայրկեանի մը յաղթանակի պասքէթը արձանագրելու... մրցումը աւարտեցաւ 64-62 արդիւնքով:

Մինչ երկու մրցակից ակումբներուն մարզիկ-

շար. էջ 20



ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հելիոպոլսոյ մէջ գտնուող Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ը ամառ թէ ձմեռ բաց է բոլորին համար: Ընտանիքի մը ամէն տարիքի անդամներուն նախասիրութիւնները գոհացնելու միջոցները առկայ են այդտեղ: Փոքրերը ունին իրենց խաղաղվայրը, մարզասեր եւ ընկերասեր աղջիկներն ու տղաքը իրենց մարզադաշտերը, համացանցի սիրահարները իրենց յատուկ սենեակը, տարեցները նարտի, բառխաղի թղթախաղի իրենց խումբերը եւ երիտասարդ ծնողները իրարու հանիպելու ու հանգիստ գրուցելու յարմարագոյն վայրը:

Այս բոլորին վրայ անլցուցէք նաեւ բացօթեայ կանաչ շրջապատը, մաքուր օդը եւ սպասարկման յարմար գիւները: Իսկապէս իտեալական վայր ու միջավայր, զոր պետք է գնահատել եւ բարոյապէս եւ նիւթապէս աջակցիլ՝ անոր պահպանման ու գոյատեւման:

Ընթացիկ տարուայ Յուլիսի 4-ի երեկոյեան Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի կազմակերպած «Ամառնային եղանակի բացման ճաշկերոյթ»-ը ինչպէս բոլոր հայկական ակումբներու, նոյնպէս եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի համար ամենամեայ ձեռնարկներէն մէկն է: Այս տարի եւս ակումբին պարտեզը տօնական զգեստ հագած կը հիւրընկալէր հոն փութացած ժողովուրդը:

Մթնոլորտը հրաշալի էր: Երաժշտութիւն, լուսաւորութիւն եւ ճաշի սպասարկութիւն: Մանուկները, որոնք բացի խաղալէ, պարտականութիւն ստանձնած էին վաճառելու



վիճակահանութեան տոմսերը, իրենց փոքրիկ ձեռքերուն փոքր մատերով հաշիւները կը կարարէին չսխալելու համար: Եւ վերջապէս վիճակահանութեան պատճառած զուարճալի մթնոլորտը, գիշեր բարիներ, պա՛յ, ցտեսութիւն, վաղը կը տեսնուինք եւ անպայման բաժանումէ առաջ «վերջին պահու ոտքի կանգնած խօսակցութիւն»:

Մեկնող վերջին անձերէն ետք ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ը քուն մտնելու համար կ'ուզէ գէթ երկու ժամ եւ յաջորդ օր իր դռները կրկին կը բանայ ընդունելու իր անդամներն ու սիրասուն մանուկները:

Եւ այսպէս շարունակ... Եգիպտոսի խաղաղ ու հիւրընկալ երկինքին տակ:

շար. էջ 19-էս →

ներն ու համակիրները յաղթանակէն գինովցած կամ պարտութիւնէն շշմած կը սկսէին հեռանալ դաշտէն, Աղէքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի պատասխանատուները սեղաններ կը շարէին դաշտին մէջտեղը գիշերուայ ճաշկերոյթ - ընդունելութեան համար: Հաճելի եղանակներու ընկերակցութեամբ, շուտով սկսաւ աղջաններու եւ ճաշերու ազատ շքասեղանը որ այս տարի իսկապէս շատ ճոխ ու այլազան էր: Անուշեղէններու շքասեղանէն ետք եղաւ վիճակահանութիւնը: Ժամանակը արդէն շատոնց կէս գիշերէն անց էր սակայն ներկաները չէին ուզեր հեռանալ օդաւետ ակումբէն: Ընտրահաւորելի են ակումբի տիկիներն այս տեսակ յաջող ընդունելութիւն մը կազմակերպելուն համար:

Կիրակի օրուայ մրցումը Աղէքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ին եւ ՀՄԸՄ Արարատին միջեւ էր: Նախորդ օրուայ լարուած վիճակէն ձերբա-

զատուած, Արարատը կը խաղար անելի հանգիստ:Արդիւնքի տարբերութիւնը միշտ քիչ էր, քանի որ Աղէքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի տղաքն շատ լաւ խաղ ցուցաբերեցին: Վերջին կիսախաղին էր որ տարբերութիւնը շատցաւ եւ մրցումը ւարտեցաւ 61-50 ի նպաստ Արարատին:

Յաղթական խումբը ստացաւ տեր եւ տիկին Նուպար Սիմոնեանի նուիրած բաժակը: Երկու խումբերն ալ ստացան մետալներ նուիրուած ինչպէս միշտ տեր եւ տիկին Վարդ Ալէքսանեանի կողմէ:

Վարձքը կատար Աղէքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութեան յաջող մրցաշարք մը կազմակերպելուն համար:

Սօսի Ներեւտեան / Յակոբեան
Յուլիս 2009

Կանոնագրին մանրամասնութիւնները տեսնել էջ 21-ի վրայ:



ԵԳԻՊՏԱՐԱՅ ՄԻՋԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՊԱՍԵՐԹ ՊՈԼԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԵՐՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Յօդուած 1

Ընդհանուր Կետեր

1. Եգիպտահայ Միջակումբային Պասքէթպօլի Ամառնային Մրցաշարքերուն իրաւունք ունին մասնակցելու հետեւեալ ակումբները: ԶՄԸՄ Արարատ, ԶՄԸՄ Կամք, ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ Աղեքսանդրիա, ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրէ եւ Սրբուհի Թերեզա: Այս մրցաշարքերը պիտի կազմակերպուին միայն այս 5 ակումբներով:

2. Ամէն ակումբ պատասխանատու է իր կազմակերպելիք մրցաշարքին կանոնաւոր կայացումին, համաձայն Եգիպտոսի «Basketball Federation»-ի օրէնքներուն (իրաւարարներ, ապահովութիւն եւայլն)..

3. Զինգ ակումբներուն վարչութիւնները պարտին, ջանք թափել որ մարզական ոգին տիրապետէ այս խաղերուն, կառավարել իրենց խաղացողները, խուսափիլ որեւէ անտեղի գործունէութենէ թէ՛ մրցաշարքերուն ընթացքին, թէ՛ անոնցմէ ետք, թերթերով կամ որեւէ այլ լրատուամիջոցով:

4. Այս մրցաշարքերուն ընթացքին պիտի կիրարկուին Եգիպտոսի պասքէթպօլի Ֆետերասիոնի թէքնիք օրէնքները բացառութեամբ յաջորդ յօդուածներուն մէջ յիշուած կետերուն.

Յօդուած 2

Խաղացողներու մասնակցութեան պայմաններ

Խաղացող մը որպէսզի իրաւունք ունենայ մասնակցելու այս մրցաշարքերուն, պարտի լրացնել հետեւեալ պայմանները, ըստ իր կարգավիճակին.

Ա. ԵԳԻՊՏԱՐԱՅԵՐ

Պարտին ունենալ Եգիպտական հպատակութիւն եւ ըլլան անդամ Եգիպտահայ համայնքին

Պահանջուած փաստաթուղթեր:

Եգիպտական հպատակութեան փաստաթուղթ ՆԱԵԻ

Եգիպտահայ Առաջնորդարանէ մը Եգիպտահայ համայնքին պատկանելու վկայագիր ԿԱՄ հայ եկեղեցիէ մը մկրտութեան վկայագիր:

Բ. ՈՉ ԵԳԻՊՏԱՐԱՅԵՐ

Պարտին ունենալ Եգիպտոսի մէջ կեցութեան իրաւունք (Ըգամա) առ նուազն մէկ տարի առաջ իրենց խաղալիք առաջին մրցաշարքին թուականէն:

Պահանջուած փաստաթուղթեր:

Կեցութեան փաստաթուղթ Եգիպտական կառավարութենէն:

ՆԱԵԻ Կնիք անցագրին վրայ փաստելու համար մէկ տարուայ շարունակական կեցութիւնը Եգիպտոսի մէջ :

ՆԱԵԻ Զայ ըլլալու փաստ (իր նախկին քաղաքի Զայկական Առաջնորդարանէն փաստաթուղթ):

Գ. ԾԱԳՈՒՄՈՎ ԵԳԻՊՏԱՐԱՅԵՐ

Փաստեն որ իրենց հայրը կամ մայրը կամ մեծ հայրը կամ մեծ մայրը Եգիպտահայ է:

Պահանջուած փաստաթուղթեր:

Եգիպտական հպատակութեան փաստաթուղթ կամ իր հօր կամ մօր կամ մեծ հօր կամ մեծ մօր Եգիպտահպատակութեան փաստաթուղթ:

ՆԱԵԻ Վկայագիր Եգիպտահայ Առաջնորդարանէ մը փաստելու իր հօր կամ մօր կամ մեծ հօր կամ մեծ մօր Եգիպտահայ համայնքին մաս կազմած ըլլալը ԿԱՄ անոր հայկական եկեղեցիէ մը տրուած մկրտութեան վկայագիրը:

Փաստաթուղթերը պիտի պահանջուին ՄԻԱՅՆ այն պարագային երբ ակումբ մը կասկածի խաղացողի մը ինքնութենէն եւ գրաւոր բողոքագիր դրկէ խաղացողին ակումբին նաեւ օրինակ մը՝ միւս ակումբներուն առ ի գիտութիւն:

Յօդուած 3

Կազմակերպչական օրէնքներ

1. Կազմակերպող ակումբը պարտի հրաւեր դըրկել մնացեալ չորս ակումբներուն իր կազմակերպած մրցաշարքի թուականէն առ նուազն երեք շաբաթ առաջ, տեղեկութիւններ տալով մրցաշարքին մրցումներուն՝ թուականներուն եւ ժամերուն մասին



Պր. Պերճ Միսքճեան եւ Տոքթ. Վիգէն Ծիզմեճեան



(այս մասին յատկապես պատրաստուած նամակի օրինակ մը պիտի դրկուի):

2. Մասնակցող ակումբները պարտին իրենց մասնակցութեան հաւանութիւնը տալ մրցաշարքէն 10 օր առաջ, դրկելով իրենց ակումբին մարզիկներուն, մարզիչին եւ պատասխանատուին անունները. առաւելագոյնը՝ 20 անուն: Մրցումներուն ժամանակ, ասոնցմէ միայն 12 խաղացող, 1-2 մարզիչ եւ 1 պատասխանատու իրաւունք պիտի ունենան նստելու խումբին յատկացուած նստարաններուն վրայ:

3. Ակումբ մը իրաւունք ունի իր մրցաշարքը չկազմակերպելու պայմանաւ որ իր պատճառները նախապես յայտնէ միւս ակումբներուն:

4. Եթէ ակումբ մը իրաւորուած է մասնակցելու մրցաշարքի մը եւ կը քաշուի մասնակցելէ ԿԱՄ եթէ ակումբ մը քաշուի մրցաշարքի մը ընթացքին, սոյն ակումբը իրաւունք պիտի չունենայ կազմակերպելու իր յաջորդ մրցաշարքը (ըլլայ նոյն՝ կամ յաջորդ տարուան ընթացքին) բացի այն պարագայէն որ մնացեալ չորս ակումբները արտօսեն:

Ակումբի մը քաշուելուն պարագային մնացեալ ակումբները պիտի չմասնակցին անոր մրցաշարքին եթէ նոյնիսկ իրաւեր ստանան:

5. Ամէն ակումբ պիտի կազմակերպէ ամառնային շրջանի տարեկան մէկ մրցաշարք միայն: Մնացեալ ակումբները պարտաւոր են մասնակցելու սոյն մրցաշարքերուն:

Այս մրցաշարքերը պիտի կազմակերպուին հետեւեալ շարքով:-

- ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Աղեքսանդրիա
- ՀՄԸՄ Կամք
- ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրէ
- ՀՄԸՄ Արարատ
- Սրբուհի Թերեզա

Որեւէ փոփոխութիւն կարելի է ընել երկու ակումբներու միջեւ որոնք կը փափաքին իրենց մրցաշարքերուն թուականները փոխանակել:

6. Եգիպտահայ Միջակումբային Պասքէթպոլի Ամառնային Մրցաշարքերուն պիտի մասնակցին միայն վերոյիշեալ 5 ակումբները: Որեւէ ուրիշ ակումբ պէտք չէ իրաւորուի այս մրցաշարքերուն:

7. Եթէ խաղացող մը հեռացուի որեւէ մրցումէ մը, ան իրաւունք պիտի չունենայ մասնակցելու իր խումբին յաջորդ համահայկական մէկ մրցումին (նոյն կամ յաջորդ մրցաշարքին):

8. Մրցաշարք կազմակերպող ակումբը պարտի տրամադրել մեծ "Scoreboard" մը "24 sec Stopwatch" - ով:

Յօդուած 4

Խաղացողներու ակումբներու փոփոխում

1. Խաղացող մը կրնայ իր ակումբը փոխել միայն գրաւոր արտօսութեամբ իր պատկանած ակումբին: Խաղացողը պիտի կարենայ իր նոր ակումբին հետ խաղալ իր ստացած արտօսութեան նամակի թուականէն մէկ շաբաթ ետք (օրինակ մը այս նամակէն պէտք է դրկուի միւս ակումբներուն առ ի գիտութիւն)

2. Եթէ խաղացող մը ձգէ եւ փոխէ իր ակումբը առանց իր նախկին ակումբին գրաւոր հաւանութեան, իրաւունք պիտի չունենայ մասնակցելու յաջորդ 5 Եգիպտահայ միջակումբային պասքէթպոլի ամառնային մրցաշարքերուն, սկսելով այն մրցաշարքին թուականէն երբ ինք խաղաց իր վերջին մրցումը իր ձգած ակումբին հետ:

Օրէնքներու նախագիծը պատրաստեցին Վիգէն Ծիգմեճեան, Պերճ Միսքճեան

Վերոյիշեալ օրէնքները ի զօրու են 2009-ի եւ 2010-ի Եգիպտահայ միջակումբային պասքէթպոլի ամառնային մրցաշարքերուն եւ ինքնաբերաբար կը նորոգուին եթէ որեւէ փոփոխումի պահանջ մը չըստացուի մասնակցող 5 ակումբներէն:

Մասնակցող 5 ակումբները համաձայնութեամբ պիտի ընտրեն կազմակերպիչ յանձնախումբ մը հետեւելու եւ կառավարելու համար մրցաշարքերուն մրցումները:



Եգիպտահայ մարզական ակումբներու ներկայացուցիչները ՀՄԸՄ Կամքի մէջ:



«ՉԱՆԳԵԶՈՒՐ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

Ուրբաթ 8 Մայիսի երեկոյեան, Ամերիկեան Համալսարանի «Էուրոթ Մեմորիլ» սրահին մէջ կայացաւ ելոյթը Կոկանեան սրահի «Չանգեզուր» պարախումբին:

Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան կը հովանաւորէր ձեռնարկը, իսկ Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի ատենապետ տէր եւ տիկին Անդրանիկ Մետրոպեան կը նախագահէին հանդիսութեան:

Հոծ բազմութիւն մը կանուխէն գրաւած էր սրահին աթոռները: Սրահին մուտքին բաժնուած յայտագիրին կողքը տիար Գեղամ Թրայեան նկարագարդած էր սափորակիր հայ պարուհիներով ու տիկնակիր պարողներով:

Մինչ քուլիսներու ետին պարախումբը կը պատրաստուէր ելոյթ ունենալու, տոքթ. Ճորճ Սիմոնեան կը կատարէր պարային ներկայացման բացումը հայերէն եւ արաբերէն լեզուներով:

Ան իր ելոյթին մէջ անդրադարձաւ «Չանգեզուր» պարախումբին կազմութեան, նշեց պարուսոյցներուն անունները եւ ելոյթներուն թուականները: Ապա, ան սեղմ գիծերու մէջ ներկայացուց այժմու

պարուսոյցներ էլէն Մարտիրոսեանն ու Սիւզան Յակոբեան-Գարգուրը, որմէ ետք «Տօնական» պարի հնչիւններուն տակ սկսաւ «Չանգեզուր»-ի ելոյթը:

Թիւով 63 հոգի հաշուող «Չանգեզուր» պարախումբը կազմուած էրիտասարդ, պատանի եւ մանուկ երկսեռ պարողներէ, ներկայացուցին տարբեր ժողովուրդներու 17 պարեր: Եթէ նկատի առնենք էլէն Մարտիրոսեանի ղեկավարութեամբ տեղի ունեցած «Չանգեզուր» պարախումբի 2005 եւ 2006 թուականներու եւ Սիւզան Յակոբեան-Գարգուրի ղեկավարութեամբ կայացած ելոյթը 2008 թուականին, առանց տատամսելու կրկանք ըսել, որ խումբը մեծ քայլերով կը յառաջդիմէ: Իսկ եթէ նկատի առնենք ելոյթին պատրաստուելու համար տրամադրուած ժամանակը (տարին երեք ամիս, շաբաթը 1-2 օր), առկայ սիրողական պայմանները գրեթէ ամէն ինչի մէջ, բեմայալոյարում, զգեստաւորում, երաժշտութեան ձայնասփռում, լուսաւորութիւն, եւայլն, կ'ըսենք «ԱՊՐԻԷ» բոլորող որ յաջողեցաք ձեռք բերել խմբային աշխատանքի յոյժ գնահատելի արդիւնք մը եւ արժանանալ հանդիսատեսին գնահատանքին:

«Տ.»

ՇԱՀԵԿԱՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Հետաքրքրական բանախօսութիւն մըն էր ներկայացուածը Ուրբաթ, 3 Յուլիսի երեկոյեան Գահիրէի Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Նիւթը՝ «Մուսա Տաղի դիմադրութիւնը ըստ Օսմանեան եւ Արեւմտեան Արիւստային Աղբիւրներու»: Ներկայացնողն էր Մուսա Տաղիի գաւակ՝ ամերկահայ մտաւորական, Մուսա Տաղի մասնագետ, Զալիֆորնիոյ Պետական Համալսարանի (Նորթրիճ) հայկական ուսումնասիրութիւններու ծրագրի տնօրէն եւ դասախօս տոքթ. Վահրամ Շեմմասեան:

Գահիրէի Թեմական ժողովի ատենադպիր տոքթ. Սուրէն Պայրամեան հակերճ խօսքով մը ներկայացուց օրուան բանախօսը նշելով, թէ ան Գահիրէ կը գտնուէր ուսումնասիրելու համար Մուսա Տաղի դիմադրութեան եւ Փոր Սայիտ ապաստանած Մուսա Տաղիներու վերաբերող Գահիրէի Ազգային Առաջնորդարանի եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի արխիւները:

Տոքթ. Վահրամ Շեմմասեան իր ելոյթը սկսաւ նախ անդրադառնալով այն հանգամանքներուն, որոնք մղած էին զինք իր կեանքին կարեւոր նպատակը դարձնել, պրպտել եւ ուսումնասիրել այն ամէնը որ կը վերաբերի Մուսա Տաղին եւ Մուսատաղիին (աշխարհագրական դիրք, բնութիւն, պատմութիւն, մշակոյթ - բնակչութիւն - լեզու, տն-

տեսութիւն, ապրելաձեւ եւ այլն), ապա արտայայտուեցաւ Մուսա Տաղի դիմադրութեան եւ Արեւմտեան Եւրոպայի երկիրներէն եւ Օսմանեան արխիւներէն իր ձեռք բերած նիւթերուն մասին, ըլլան անոնք փաստաթուղթեր թէ լուսանկարներ:

Ապա ան անդրադարձաւ Փոր Սայիտ ապաստանած Մուսա Տաղիներու վերաբերող այն հարուստ արխիւային նիւթերուն մասին, որոնք պահպանուած են Գահիրէի ՀԲԸՄ-ին եւ Գահիրէի Ազգային Առաջնորդարանին մօտ:

Տոքթ. Վահրամ Շեմմասեան մօտ երկու ժամուան ընթացքին ներկայ հասարակութեան ուշադրութիւնը լարուած պահեց Մուսա Տաղիներու մասին անոնց փոխանցելով այն ամէնը որ կարելի էր տալ կարճ ժամանակի մը մէջ:

Հայ մարդու հոգին ուրախութեամբ կը խայտայ ի տես նման հայորդիներու առանձին կատարած աշխատանքին, յայտնաբերելու ու ի մի հաւաքելու այն ամէնը որ առընչութիւն ունի իր պապերու ծննդավայրին հետ, ու անոնցմէ ոմանք նուիրելու Ուաշինկթօնի (ԱՄՆ) մէջ հիմնուած ցեղասպանութեան թանգարանին:

Արաքսի Տեովէթեան



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ



Տեր եւ տիկին Կարօ Վարժապետեան բախտաւորուած են երկրորդ զաւակով մը, զոր անուանած են Թալիա:

Տիար Կարօ Վարժապետեան անցեալին եղած է Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութեան օժանդակ անդամ եւ ներկայիս օժանդակ անդամ է Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութեան:

Թալիայի ծնունդին առթիւ կը շնորհատրենք ծնողքը, մեծ ծնողները տէր եւ տիկին Վահէ Վարժապետեանը եւ տէր եւ տիկին Ուաէլ Ֆարահը նաեւ մեծ-մեծ մայրը տիկին Անուշ Պալաեանը:

Նորածին Թալիային կը մաղթենք յաւէտ խիւնդ ու ծիծաղ:

Ուրախութեամբ տեղեկացանք, թէ Գահիրէի ՀԲԸՄ-ի երիտասարդ անդամներէն տէր եւ տիկին Ծորճ- Հրաչ եւ Քրիստինա Միքայէլեան բախտաւորուած են առջինեկ մանչ զաւակով մը, զար անուանած են Դրոյ (Troy):

Ջերմապէս կը շնորհատրենք Դրոյի ծնողքը, մեծ ծնողները տէր եւ տիկին Հրաչ Միքայէլեանները եւ տիար Տենիս Նիքոլաքոսը ու նորածինին կ'ըսենք - ԲԱՐԵՒ - ու կը մաղթենք որ «ԲԱՐԵՆ» ըլլայ իրեն ընկեր:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



Ուրբաթ, 19 Մայիսին տեղի ունեցած է ամուսնութիւնը տոքթ. Ժոզէֆ Նասիֆ Իսքանտարի ընդ օր Լորա Գասապեանի:

«Տեղեկատու»-ն կը շնորհատրէ զոյգին ամուսնութիւնը եւ այս առթիւ իր խնդակցութիւնը կը յայտնէ զոյգին ծնողներուն տէր եւ տիկին Խաչիկ Գասապեաններուն եւ տէր եւ տիկին Նասիֆ Իսքանտարներուն նաեւ մեծ ծնողներուն տիկին Ալիս Քէչէճեանի եւ տիկին Մարի Գասապեանի:

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Յառով կ'արձանագրենք անակնկալ մահը Գահիրէի ՀԲԸՄ-ի նախկին վարչական անդամ Յակոբ Փամպուրճեանի, որ պատահեցաւ Երկուշաբթի 18 Մայիսին:

Հանգուցեալը երկար տարիներ որպէս հաղորդավար պաշտօնավարած է Գահիրէ-ի Պետական Չայնասփիլոփ հայկական բաժնէն ներս:

Կը ցաւակցինք հանգուցեալին սգակիր բոլոր պարագաներուն:

Թող իր յիշատակը վառ մնայ զինք սիրող ունկնդիրներուն սրտին մէջ:

